

ՄԵԾԱՐԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԵՎ ՈՐՈՊԱՅՈՒՄ, ԳՅՈՒՄԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԵՎ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Տարածաշրջանային Ամփոփ Զեկույց

Հելեն Քյոխ

Չեղինակը պատասխանատու է սույն հրապարակման մեջ զետեղված փաստերի ընտրության և ներկայացման, ինչպես նաև արտահայտված կարծիքների համար, որոնք չեն հանդիսանում ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպության (ՄԱԿԳՄԿ, այսուհետ՝ UNESCO) և ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտի (ՑՈՒԻ) տեսակետներ և չեն ներկայացնում Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները:

Սույն զեկույցում ներկայացված նյութերը և կիրառված անվանումները չեն արտահայտում ՅՈՒՆԵՍԿՈ-ի կամ ՑՈՒՆԵՍԿՈ-ի ՑՈՒԻ կարծիքը կապված որևէ երկրի կամ տարածքի իրավական կարգավիճակի, կամ դրանց իշխանությունների կամ որևէ երկրի կամ տարածքի սահմանների սահմանագծման հետ:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտ, 2009թ.

Գեմանիա, Չամբուրգ 20148

Ֆելդբրունենշթրասսե 58

ISBN 978-92-820011650-2

2007թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ի անդամ բոլոր երկրներին խնդրեցին զեկույցներ կազմել իրենց երկրներում մեծահասակների ուսումնառության և կրթության վիճակի և 1997թ. ի վեր մինչև Մեծահասակների Կրթության Հինգերորդ Միջազգային Համաժողովը (այսուհետ՝ ԿՈՆՖԻՆՏԵԱ V) տեղ գտած նշանակալի զարգացումների վերաբերյալ՝ ի նախապատրաստումն Մեծահասակների Կրթության Վեցերորդ Միջազգային Համաժողովի (ԿՈՆՖԻՆՏԵԱ VI): Կազմվեցին Ազգային Ձեկույցների կազմման մի շարք Ուղեցույցեր, որոնցում առաջադրված էին հարցեր, որոնք պետք է օժանդակեին զեկույցների կազմմանը, դրանք լրացվեցին և ներկայացվեցին ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտ:

Ազգային զեկույցները կարելի է ձեռք բերել Ինստիտուտի վեբ կայքից՝

<http://www.unesco.org/uil/en/nesico/confintea/confinteacountries.htm>

Հելեն Քյոխի կողմից, ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս Ուսումնառության Ինստիտուտի համար կազմված սույն զեկույցում փորձ է արվում ամփոփ և արդար կերպով շարադրել Անդամ երկրների զեկույցները, նպատակահարմարության դեպքում, օգտագործելով նաև այլ աղբյուրներ, զեկույցներ և հետազոտական փաստաթղթեր:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտ, 2009թ.

Գեմանիա, Համբուրգ20148

Ֆելդբրունենշթրասսե 58

Հեռ: +49(0) 40 44 80 41-0

Նաքս: + 49(0) 40 410 77 23

uil@unesco.org

www.unesco.org/ui

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	7
Բովանդակություն և ոլորտ	7
Աղբյուրներ և սահմանափակումներ.....	11
Քաղաքականությունը և Ղեկավարման Համատեքստը/Միջավայրը	12
Գերպետական ազդեցությունները տարածաշրջանում քաղաքական ուղղությունների ձևավորման գործընթացների վրա	14
Ազգային քաղաքականության մշակում	17
Մեծահասակների Կրթության և Ուսումնառության (ՄՀԿՈ) կառավարում.....	21
Օրենսդրական դաշտ	30
ՄՀԿՈ ֆինանսավորում.....	31
ՄՀԿՈ ներդրումները տարածաշրջանում	34
ՄՀԿՈ ոլորտում ներդրումների խթանում.....	42
Մասնակցություն Մեծահասակների Կրթությանը և Ուսումնառությանը	45
Տարածաշրջանում մեծահասակների կրթական նվաճումները	45
Մասնակցությունը ՄՀԿՈ-ում	48
ՄՀԿՈ առաջնային թիրախ խմբեր	50
ՄՀԿՈ մասնակցության խոչընդոտների հաղթահարում.....	53
Մեծահասակների Կրթության և Ուսումնառության Տրամադրում.....	58
Ի՞նչ է մեծահասակների ուսումնառությունը.....	61
«Երկրորդ հնարավորություն ընձեռող» ՄՀԿՈ.....	62
Ստորին և վերին միջնակարգ կրթությանը համարժեք որակավորումներ	63
Տառաճանաչության ուսուցանում	65
Մասնագիտական ՄՀԿՈ	72
Հանրամատչելի/լիբերալ ՄՀԿՈ	76
Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ-ներ).....	80
Կրթության իրականացում միգրանտների համար	81
Մեծահասակների բարձրագույն կրթություն.....	83
Մեծահասակների Կրթության և Ուսուցման ճանաչում.....	85
Որակավորումների Եվրոպական Շրջանակ.....	86

Որակավորումների ազգային համակարգեր.....	87
Ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության վավերացում.....	89
Մեծահասակների կրթության և ուսումնառության Որակը	95
Որակի ապահովման մեխանիզմներ.....	98
Աշխատակիցների որակավորումներ և հմտություններ.....	102
Մեծահասակների կրթության և ուսումնառության ոլորտի հետազոտություններ	109
Մեծահասակների կարողություններ	110
Եզրակացություն	113
Հանձնարարականներ	122
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	126
Հավելված 1.	127
Հավելված 2.	128
Հավելված 3.	129
Հավելված 4.	137
Մատենագրություն	144

Ներածություն

Բովանդակություն և ոլորտ

Սույն տարածաշրջանային զեկույցում ներկայացված են մեծահասակների կրթության և ուսումնառության ոլորտի զարգացումները Եվրոպայի, Հարավային Ամերիկայի և Իսրայելի ՅՈՒՆԵՍԿՈ-ի տարածաշրջանում (Հավելված 1): Ձեկույցը կազմվել է Անդամ պետությունների զեկույցների (Հավելված 2) հիման վրա: Այն հանդիսանում է Մեծահասակների Ուսումնառության և Կրթության (ՄՀԿՈՒ) Համընդհանուր Ձեկույցի մի մաս, որտեղ ներկայացված է 2009թ. ԿՈՆՖԻՆՏԵԱ VI-ը (Հավելված 3-ում բերված են Անդամ պետությունների ակնկալիքները ԿՈՆՖԻՆՏԵԱ VI-ից):

ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի *Համընդհանուր Հռչակագրում* մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը սահմանված է հետևյալ կերպ.

Մեծահասակների կրթությունը նշանակում է ֆորմալ կամ այլ տիպի ուսումնառության շարունակական գործընթացների ամբողջություն, որի միջոցով տվյալ հասարակության կողմից մեծահասակ համարվող մարդիկ զարգացնում են իրենց կարողությունները, հարստացնում են իրենց գիտելիքները, կատարելագործում են իրենց տեխնիկական կամ մասնագիտական որակավորումները, կամ փոխում են մասնագիտական ուղղվածությունը՝ իրենց սեփական կամ տվյալ հասարակության կարիքներին համապատասխան: Մեծահասակների կրթությունն իր մեջ ներառում է ֆորմալ կրթությունը, շարունակական կրթությունը, ոչ ֆորմալ ուսումնառությունը և ինֆորմալ, կամայական բնույթի ուսումնառությունը, որը մատչելի է բազմամշակույթ ուսումնառու հասարակություններում, որտեղ ընդունված են տեսության և գործնականի վրա հիմնված մոտեցումները (ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կրթության ինստիտուտ 1997 ա):

ՄՀԿՈՒ-ն տարաբնույթ է: Այն իր մեջ ներառում է մեծահասակների կրթության և ուսումնառության լայն շրջանակ, որին բնորոշ են տարբեր համընդհանուր կառույցներ, գերակայություններ, նպատակներ, կրթություն իրականացնող

հաստատություններ, ուսումնառության բովանդակության բազմազանություն, տարբեր կազմակերպական ձևեր, տևողություն և ուսումնառության արդյունքներ:

Ազգային զեկույցների և, հետևաբար, նաև սույն զեկույցի առանցքը ՄՅԿՈՒ-ն է՝ որպես ֆորմալ և ոչ ֆորմալ համատեքստում ուսումնառության և դասավանդման կազմակերպված գործընթաց: Չնայած զեկույցում արծարծված են ՄՅԿՈՒ-ի տարբեր կատեգորիաներ, սակայն իրականում, մեծահասակների ուսումնառության տիպերը մասամբ համընկնում են և հաճախ հստակ տարբերակված չեն: Սովորելու ընթացքում մեծահասակները չեն հետևում հստակ սահմանված վարչական կամ այլ կարգերի: Նրանց նպատակները միշտ չէ, որ համընկնում են ֆինանսավորող կամ կրթություն իրականացնող կազմակերպության նպատակներին: Հաճախ մեծահասակներն իրենց ուսումնառության արդյունքում ձեռք են բերում չնախատեսված կամ անսպասելի արդյունքներ կամ կիրառում: Ավելին, աստիճանաբար ձևավորվող գիտելիքի հասարակությանը բնորոշ կարևոր առանձնահատկությունը անհատների և ձեռնարկությունների կողմից, համայնքներում և տարածաշրջաններում իրականացվող ուսումնառության բոլոր բաղադրիչների փոխկապակցվածությունն է:

Ընդունելով այն փաստը, որ միևնույն տարածաշրջանի կրթության և ուսուցման համակարգերը հիմնված են տարբեր ավանդույթների վրա՝ սույն զեկույցում ՄՅԿՈՒ ոլորտի տարբեր եզրերին բնորոշ առանձնահատկություններն ու միտումները ներկայացված են ընդհանուր գույներով, այսինքն՝ նկարագրվում են ՄՅԿՈՒ ոլորտի քաղաքականությունը, կառավարումն ու օրենսդրությունը, ֆինանսավորումը, մասնակցությունը, ՄՅԿՈՒ-ի հասանելիության շրջանակը, ուսումնառության հնարավոր տարբերակները, ուսումնառության արդյունքներն ու դրանց ճանաչումը, որակը և ՄՅԿՈՒ-ի վերաբերյալ հետազոտությունները: Այս մոտեցման կիրառումը չի նշանակում, որ չեն ընդունվում տարածաշրջանի երկրների ներսում կամ նրանց միջև գոյություն ունեցող ներկա, ինչպես նաև պատմականորեն ձևավորված քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրականության երբեմն խորը տարբերությունները, որոնք բոլոր երկրներում իրենց ազդեցությունն են թողնում ՄՅԿՈՒ-ի վրա: Իսկապես, որևէ տարածաշրջանի ՄՅԿՈՒ ոլորտի մասին պատկերացում կազմելու համար չափազանց կարևոր է մտապահել, որ քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային համատեքստերը տարբեր են:

Տարածաշրջանում ՄՅԿՈՒ ոլորտն ընդգրկում է տարբեր համատեքստեր, և, հետևաբար, ՄՅԿՈՒ-ի նկատմամբ սահմանված պահանջները բավականին տարբեր են: Առավել զարգացած արդյունաբերություն ունեցող երկրները նշում են, որ գլոբալ արտադրության և հաղորդակցության, կազմակերպչական նոր գործելակերպերի, տեխնոլոգիական առաջընթացի, ոլորտային փոփոխությունների, բնակչության տարիքային աճի, աշխատանքի և անհրաժեշտ հմտությունների պակասի և անհամապատասխանության, ինչպես նաև միլիոնավոր աշխատողների անբավարար հմտությունների պայմաններում անհրաժեշտ է բարձրացնել արտադրողականությունն ու մրցունակությունը, սոցիալական ապահովագրության անառողջ համակարգերի և սոցիալական մասնատվածության, ցածր և բարձր վաստակ ունեցողների միջև աճող տարբերությունների, ներգաղթի աճի պայմաններում անհրաժեշտ է պահպանել սոցիալական համախմբվածությունն ու ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև ապահովել բնական պաշարների կայուն զարգացում և պահպանում: Անցումային փուլում գտնվող և զարգացող երկրները ընդգծում են քաղաքական և քաղաքացիական վերջին գծությունները, որոնք որոշ վայրերում անկայուն վիճակ են ստեղծում, բևեռացված հասարակությունների, քանդված ենթակառուցվածքների և աղքատության առկայությունը, ժողովրդավարական գործելակերպեր և կառույցներ ստեղծելու դժվարությունները, ինստիտուցիոնալ և օրենսդրական դաշտ ստեղծելու անհրաժեշտությունը, շուկայական տնտեսության անցնելու դժվարությունները, մասնավոր հատվածը հզորացնելու և առավել բարձր մակարդակի մակրոտնտեսական կայունության ու կայուն զարգացման հասնելու անհրաժեշտությունը, չձևավորված աշխատաշուկայի առկայությունը, գործազրկության/երկարատև գործազրկության բարձր մակարդակը և աշխատուժի կրթության ու հմտությունների ցածր մակարդակը, որակյալ աշխատուժի արտահոսքը, բնակչության ծերանալու փաստը և սոցիալական ու առողջապահական արդյունավետ համակարգեր ստեղծելու անհրաժեշտությունը:

Սակայն տարածաշրջանի բոլոր երկրներին բնորոշ է համընդհանրացման (գլոբալիզացիա) ենթարկված տնտեսությունների, կապի համակարգերի և մարդկային ու մշակութային հեռանկարների արագ փոփոխության ընդհանուր միջազգային համատեքստը, որտեղ առանցքային ռեսուրսը գիտելիքն է և հնուտ

աշխատուժի ու ակտիվ քաղաքացու կարիքը հանգեցնում է բոլոր մակարդակներում կրթության նկատմամբ պահանջարկի աճի:

Գերպետական կառույցը՝ Եվրոպական Միությունը (ԵՄ), առանցքային դեր է կատարում ՅՈՒՆԵՍԿՈ-ի տարածաշրջանի շատ երկրներում ՄՀԿՈւ ոլորտի զարգացման գործում՝ Լիսաբոնի օրակարգում ամրագրված ցկյանս ուսումնառության քաղաքականությունների, նպատակների և ուղղությունների միջոցով, որոնք ամփոփվել են «2010թ. Կրթություն և ուսուցում» ծրագրում: Եվրոպական Միությունը կազմված է 27 Անդամ պետությունից: **Իսլանդիան և Նորվեգիան** սերտորեն աշխատում են ԵՄ-ի հետ «2010թ.Կրթություն և ուսուցում» և «Միության ցկյանս ուսումնառություն» ծրագրերի շրջանակում: **Շվեյցարիան** մասնակցում է ԵՄ Բոլոնիայի (բարձրագույն կրթություն) և Կոպենհագենի (մասնագիտական կրթություն և ուսուցում) գործընթացներին և «Ցկյանս ուսումնառության» ծրագրին: Յոթ պետություններ (**Թուրքիա և Հարավ-արևելյան Եվրոպայի երկրներ**) Եվրոպական Միության անդամակցության թեկնածու են և քայլեր են ձեռնարկում իրենց քաղաքականություններն ու գործելակերպը ԵՄ-ի քաղաքականություններին ու գործելակերպերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ձեկույցում «ԵՄ-27+» տերմինը օգտագործվում է ցույց տալու ԵՄ-ի՝ 27 գումարած բոլոր մյուս երկրները, կամ դրանցից մի քանիսը (կախված համատեքստից)՝ **Իսլանդիա, Նորվեգիա, Թուրքիա, Խորվաթիա և Մոնտենեգրո**: Վերջին երեք երկրներն արդեն ստացել են ԵՄ անդամակցության թեկնածուի պաշտոնական կարգավիճակ: **Իսրայելն** ու **Վրաստանը և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) հինգ** երկրներ մասնակցում են Միության «Եվրոպական հարևանության քաղաքականությանը», որն աջակցում է մարդկային ռեսուրսների զարգացմանը: **Ռուսաստանի Դաշնությունը** հատուկ Ռազմավարական գործընկերություն է հաստատել Միության Մարդկային Ռեսուրսների Վարչության հետ: Եվրոպական ընդլայնման քաղաքականությունների շրջանակներում, ԵՄ գործակալություններից մեկը՝ Եվրոպական Կրթական Հիմնադրամն (ԵԿՀ) անցումային փուլում գտնվող երկրներին աջակցություն է տրամադրում իրենց մարդկային ռեսուրսները զարգացնելու գործում՝ բարգավաճելու, կայուն զարգացում ապահովելու և հասարակության ներգրավումը խրախուսելու նպատակով: Այսպիսով, այնպիսի

մեխանիզմներ, ինչպիսիք են՝ Անդամակցության նախնական համաձայնագրեր և Եվրոպական Հարևանության Ծրագիր, հանդիսանում են ԵՄ-ի կողմից խրախուսվող ցկյանս ուսումնառության քաղաքականության և գործելակերպերի անցնելու երթուղիներ:

Աղբյուրներ և սահմանափակումներ

Սույն զեկույցի համար սկզբնաղբյուր են հանդիսացել տարածաշրջանի 38 երկրների ազգային զեկույցները, որոնց կցվել են այլ աղբյուրներից ստացված լրացուցիչ նյութեր:

Ազգային զեկույցներում տեղ գտած որոշակի թերություններ ազդել են այս զեկույցի վրա: Առաջին՝ ազգային զեկույցներում հիմնականում ներկայացված է ՄՀԿՈՒ վիճակը տվյալ երկրում 2008թ. դրությամբ, և ներկայացված չեն տվյալ ոլորտի՝ 1997թ. ի վեր տեղ գտած զարգացումները: Երկրորդ՝ որոշ երկրների համար մեծ խնդիր է ՄՀԿՈՒ ոլորտի տերմինաբանությունն ու գործունեության դաշտը: Երրորդ՝ որոշ երկրներում, պատմական, քաղաքական և կրթական, ինչպես նաև սահմանափակ ռեսուրսների պատճառով, պետության կողմից ֆինանսավորվող ՄՀԿՈՒ-ն իրականացվում է բավականին ցածր մակարդակով. հիմնականում ուշադրություն է դարձվում նախնական մասնագիտական ուսուցմանն (ԵՄՈՒ) ու դպրոցից ժամանակից շուտ հեռացած երիտասարդների համար «երկրորդ հնարավորության» ապահովմանը: Չորրորդ՝ մի շարք զեկույցներ սահմանափակ կամ ընդհանրապես ոչ մի տեղեկատվություն չեն պարունակում ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ի վերաբերյալ, ինչի պատճառ կարող է լինել տեղեկատվության ոչ համակարգված հավաքագրումը կամ/և ոչ ֆորմալ կրթության (պետականորեն կամ այլ աղբյուրներից ֆինանսավորվող) իրականացման չափազանց ցածր մակարդակը: Ավելին, սպասարկման ոլորտը շատ վատ է ներկայացված և որևէ հղում՝ ինֆորմալ ուսումնառությանը չկա: Ի վերջո, տարբեր պարամետրերը և ՄՀԿՈՒ բաղադրիչների վերաբերյալ տարբեր մեկնաբանությունները խնդիրներ են առաջ բերում վիճակագրության առումով: Այսպիսով, սույն զեկույցը հիմնված է միջազգայնորեն համաձայնեցված վիճակագրական տվյալների վրա՝ տարածաշրջանում ՄՀԿՈՒ ծավալն ու բաշխվածությունը նկարագրելու համար:

Քաղաքականությունը և Ղեկավարման Համատեքստը/Միջավայրը

2-րդ թեմայի շրջանակներում. Մեծահասակների ուսումնառության պայմանների և որակի բարելավում.

ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի պատվիրակները պարտավորվում են ճանաչել մեծահասակների ուսումնառությունը խթանելու գործում պետության և սոցիալական գործընկերների նոր դերը,

երաշխավորելով բոլոր գործընկերների կողմից՝ համապատասխան կանոնադրական շրջանակների ստեղծման գործում իրենց փոխադարձ պատասխանատվության ճանաչումը՝ ապահովել մատչելիություն և անկողմնակալություն, ստեղծել մոնիթորինգի և համակարգման մեխանիզմներ և մասնագիտական օգնություն տրամադրել քաղաքականություն մշակողներին, հետազոտողներին և ուսումնառուներին՝ ռեսուրսները միմյանց փոխանցելու միջոցով:

(Ապագայի օրակարգ, Պարբ. 23 (ա), էջ 15

ՅՈՒՆԵՍԿՈ-ի Կրթության ինստիտուտ (1997թ))

11 տարի անց վիճելի է, թե որքանով են իրականացվել ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի ստանձնած պարտավորությունները: 2002թ. Սոֆիայի Հռչակագրում նշված է, որ «(տարածաշրջանի) շատ երկրներ չունեն Մեծահասակների կրթության առաջախաղացման համար անհրաժեշտ քաղաքականություններ, շրջանակներ և կառույցներ: Այդ պահանջներն են՝ նոր օրենսդրական դաշտ, բավարար ֆինանսական աջակցություն, համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ, արդյունավետ վարչական համակարգ, որակի շրջանակներ և պայմաններ, որոնք անհրաժեշտ են արդյունավետ գործընկերության ու շահերի պաշտպանության աջակցության համար» (Մեդել-Անոնովո, 2003): 2006թ. Եվրոպական Հանձնաժողովը հայտարարեց, որ ԵՄ-ում «մեծահասակների ուսումնառությունը ոչ միշտ է արժանի ճանաչում գտել տեսանելիության, քաղաքականության գերակայությունների սահմանման և ռեսուրսների առումով» (Եվրոպական Հանձնաժողով, 2006 ա): Նույն տարում 34 երկրների գործատուներ ներկայացնող ԲԻՉՆԵՍԵՎՐՈՊԱՆ կոչ արեց

միացյալ մոտեցում կիրառել Ցկյանս ուսումնառության նկատմամբ, մշակել կարողությունների զարգացմանն ուղղված քաղաքականություններ, որոնք կհանգեցնեն ներդրումների աճի, կարևորել հատուկ հմտությունները և/կամ խմբերին ու կիրառել գործընկերային մոտեցումներ, ինչպես նաև ապահովել տեղեկատվության մատչելիություն և ուղղորդում (Հիգամ, 2006): 2007թ. Հանձնաժողովը վերահռչակեց, որ ցկյանս ուսումնառությունը «կարիք ունի առավել մեծ ճանաչման՝ տեսանելիության, քաղաքականության գերակայությունների սահմանման և ռեսուրսների առումով» (Եվրոպական Հանձնաժողով, 2007ա):

2008թ. սկզբին Եվրոպական Հանձնաժողովի՝ «2010թ. Կրթություն և ուսուցում » ծրագրի առաջընթացի զեկույցում նշված է, որ ԵՄ-ում ցկյանս ուսումնառության ռազմավարություններում առկա են կապակցվածության, համակարգման և լիարժեքության զգալի անհամապատասխանություններ: Ձեկույցում Մասնագիտական կրթությունն ու ուսուցումը և Մեծահասակների ուսումնառությունը ներակայցված են միևնույն Բաժնում: Ձեկույցում նշվում է, որ Մեծահասակների ուսումնառությունը և Մասնագիտական կրթությունը և ուսուցումը հստակ տարանջատված չեն մի շարք երկրների զեկույցներում, որոնց վրա հիմնված է տվյալ զեկույցը (Եվրոպական Հանձնաժողով 2007բ):

ԵՄ-ում ՄՀԿՈւ մարտահրավերները բազմապատկվում են **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում**, որտեղ ցկյանս ուսումնառության մեծահասակների փուլը, քաղաքականապես վերահսկվող, վերևից ներքև սկզբունքով իրականացվող ՄՀԿՈւ համակարգի փլուզումից հետո առաջին անգամ կրկին հայտնվեց քաղաքական հարցերի օրակարգում, մասնագիտական ուսուցման տեսքով՝ գործազրկության բարձր մակարդակը և տնտեսական գործունեության ցածր մակարդակը հաղթահարելու նպատակով: Առաջնային է թերությունների վերացումը հետևյալ ոլորտներում՝ ՄՀԿՈւ կարգավիճակ, քաղաքականություն, օրենսդրություն, սոցիալական գործընկերություն և քաղաքացիական հասարակության ներգրավում, ռեսուրսներ, մասնագիտական կրթություն և ուսուցում և համապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին, որակավորումների թափանցիկություն, աշխատակիցների հմտություններ, քաղաքական ուշադրություն ՄՀԿՈւ-ի նկատմամբ՝ սոցիալական և մշակութային նպատակների իրականացման համար,

ազգաբնակչության շրջանում »սովորելու մշակույթի« ձևավորում: **Իսայելի** զեկույցում նշված է, որ անհրաժեշտ է խրախուսել տառաճանաչություն սովորելու համապատասխան ձևեր, նպաստել մարդկային կապիտալի զարգացմանն ու ընդլայնել միջմշակութային համերաշխությունը: **ԱՄՆ**-ն կարևորում է մեծահասակների հիմնական/տարրական կրթության (ՄՅԿ) և մեծահասակների հանրակրթության (ՄՅ) ոլորտում ներդրումների ծավալների աճը:

Գերպետական ազդեցությունները տարածաշրջանում քաղաքական ուղղությունների ձևավորման գործընթացների վրա

Բոլոր ԵՄ-27+ երկրների զեկույցներում որպես համընդհանուր նպատակ նշված են Լիսաբոնի Օրակարգի երկու փոխկապակցված նպատակները՝ դարձնել Եվրոպան «աշխարհի ամենամրցունակ և ամենադինամիկ, գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը, որին հասու է կայուն տնտեսական աճի, ավելի շատ և ավելի որակյալ աշխատատեղերի, ինչպես նաև ավելի մեծ սոցիալական համախմբվածության ապահովումը»: «Լիսաբոնը» կողմնացույց, ուղղություն և նպատակակետ է, իսկ ցկյանս ուսումնառությունը գործնականում այն լծասարքն է, որը տանում է դեպի գիտելիքի տնտեսություն և գիտելիքի հասարակություն: Ի սկզբանե ակնկալվում է, որ ՄՅԿՈւ-ն ուղղված է լինելու ձեռնարկությունների ներսում կամ դրանցից դուրս կարողությունների զարգացմանն ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակավորումների ձևավորմանը, որպես կայուն տնտեսական աճի ապահովման նպատակով մարդկային ռեսուրսների զարգացման մաս: Նաև ակնկալվում է, որ ՄՅԿՈւ-ն կնպաստի ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների պահպանմանը և հասարակության ու անհատի զարգացմանը: Նկատելի է, որ ազգային զեկույցներում սահմանափակ ուշադրություն է դարձվել այն հանգամանքներին, որ այդ երկու նպատակների միջև որոշակի հակասություն/լարվածություն կա: Ի դեպ, ազգային զեկույցներում արտահայտված չեն նաև (մեծահասակների) ուսումնառությանը (որը ի տարբերություն (մեծահասակների) կրթության իրականացվել է մասնավոր հատվածի կողմից) վերաբերող պետական քաղաքականության մշակմանը բնորոշ հնարավոր լարվածությունը: ԵՄ մեծահասակների ուսումնառության իրականացման

գործողությունների պլանում (Եվրոպական Հանձնաժողով 2007ա) սահմանված են ՄՀԿՈւ հինգ կոնկրետ գերակա նպատակներ, որոնք են՝

- հաղթահարել աշխատուժի պակասը՝ հմտությունների մակարդակի և բավականաչափ հմտությունների չտիրապետող աշխատողների որակավորումների բարձրացման միջոցով
- երկրորդ հնարավորություն տալ այն անձանց, ովքեր չափահասության փուլ են մտել չունենալով որևէ որակավորում
- նվազեցնել աղքատությունը և տարբեր խմբերի սոցիալական բևեռացումը
- բարձրացնել միգրանտների ինտեգրման մակարդակը հասարակության մեջ և աշխատաշուկայում
- (մասնավորապես տարիքով աշխատողների) մասնակցություն ցկյանս ուսումնառությանը:

Բազմաթիվ զեկույցներում նշված է ազգային քաղաքականության մշակման վրա Տնտեսական Համագործակցության և Ջարգացման Կազմակերպության (OECD) ազդեցությունը՝ IALS-ի և ALL studies-ի (OECD և Վիճակագրություն Կանադա 2000, 2005) և առաջիկա PIAAC-ի ուսումնասիրության միջոցով (OECD 2008) և ՅՈՒՆԵՍԿՈ-ի ինստիտուտների, մասնավորապես Ցկյանս ուսումնառության ինստիտուտի միջոցով: Այնուամենայնիվ, տարածաշրջանի շատ երկրների համար հիմնական գերպետական ազդեցություն ունի Եվրոպական Միությունը: Որպես կանոն ԵՄ-27 երկրներից յուրաքանչյուրն ինքն է որոշում իր երկրի կրթության ազգային քաղաքականությունը, սակայն միասին նրանք սահմանում են ընդհանուր նպատակներ և միմյանց հետ կիսում են ԵՄ լավագույն փորձը: Կրթության և ուսուցման ոլորտի Լիսաբոնի Օրակարգն իրականացվում է «2010թ. Կրթություն և ուսուցում» ծրագրի (2002) միջոցով, որը ներգրավում է քաղաքականություն մշակողներին, սոցիալական գործընկերներին և Եվրոպական մակարդակի կազմակերպություններին: Ծրագիրն իր մեջ ներառում է կրթության և ուսուցման բոլոր մակարդակները և ցկյանս ուսումնառության շրջանակին պատկանող ուսումնառության բոլոր եղանակները: Եվրոպական Հանձնաժողովը նպաստում է ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմանը և ապահովում է կրթության և ուսուցման հենամիջներ (կամավոր), որոնք, գործնականում, հանդիսանում են քաղաքական

պարտավորություններ: Իրականում, 2002թ. ի վեր Եվրոպական Հանձնաժողովը հաջորդաբար լույս է ընծայել հեռանիշներ, տեղեկագիր-ուղեցույցեր, շրջանակային սկզբունքներ, իրականացրել է տեղեկատվության փոխանակում, կազմել է եզրակացություններ, երաշխավորություններ/առաջարկներ ու հետազոտություններ՝ փորձելով Անդամ երկրներում խրախուսել, առաջ տանել, համոզելով առաջ մղել կրթության և ուսուցման համակարգը դեպի Լիսաբոնի նպատակների իրականացում: Ուշագրավ է այն, որ մինչև վերջերս ՄԶԿՈւ-ն «2010թ. Կրթություն և ուսուցում» ծրագրի աշխատանքներում ամուր դիրքեր չունեի: Այս համատեքստում Եվրոպական Հանձնաժողովը 2006թ. փորձել է ուղիներ գտնել մեծահասակների ուսումնառության խթանման համար. հատուկ Հաղորդագրությունում (Եվրոպական Հանձնաժողով 2006ա), ընդգծված է, որ մեծահասակների ուսումնառությունը կարևոր նշանակություն ունի մեծահասակների զբաղվածության և աշխատաշուկայում նրանց շարժունակության ապահովման, նրանց կողմից առանցքային կարողությունների ձեռքբերման գործում՝ միևնույն ժամանակ նպաստելով սոցիալապես համասեռ աշխատաշուկայի և հասարակության կայացմանը:

Հաղորդագրությունը կարևորում է մեծահասակների ուսումնառության ոլորտում մասնակցության աճը, որակի մշակույթ ձևավորելու անհրաժեշտությունը, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացում իրականացնող համակարգերի նշանակությունը և մեծահասակների ուսումնառության տվյալների որակն ու համատեղելիությունը/զուգահղելիությունը կատարելագործելու անհրաժեշտությունը: Հաղորդագրությունում որոշարկված են երկու կոնկրետ թիրախ խմբեր՝ ծերացող բնակչությունն ու միգրանտները: Հանապատասխան Գործողությունների Պլանում (Եվրոպական Հանձնաժողով 2007ա) կարևորվել է Հանձնաժողովի գործողությունների դերը՝ Անդամ երկրների կողմից Հաղորդագրության իրականացմանն աջակցելու գործում: 2008թ. մայիսին Եվրոպական Խորհուրդը (Եվրոպական Միության Խորհուրդ 2008) մակագրեց Հաղորդագրությունն և Գործողությունների Պլանը և Անդամ երկրներից պահանջեց իրականացնել հիմնական կետերը: ԵՄ Ցկյանս ուսումնառության 2007-2013թթ. ծրագիրը նշանակալի քաղաքական աջակցություն է տրամադրում ցկյանս ուսումնառության քաղաքականությունների իրականացմանը, իսկ Գրունդվիգի և Լեոնարդո Դա Վինչիի ոլորտային ծրագրերը համապատասխանաբար հասցեագրված են ընդհանրապես

Մեծահասակների ուսումնառության և Մասնագիտական կրթության և ուսումնառության (ներառյալ ՇՄՈւ) ոլորտի մարտահրավերներին: Ի լրումն, պետք է նշել, որ կրթությունն ու ուսուցումը, այդ թվում՝ ՄՅԿՈւ-ն, հանդիսանում են ԵՄ այլ քաղաքականությունների առանցքային ուղղություններ, որոնք վերաբերվում են զբաղվածությանը, տեղեկատվական հասարակության, ակտիվ քաղաքացիական մասնակցությանը, շրջակա միջավայրի խնդիրներին, սպառողների հարցերին և սոցիալական քաղաքականությանը: Մասնավորապես, Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը (ԵՄՀ) հանդիսանում է ԵՄ-ում մեծահասակների ՆՄԿՈՒ-ի և ՇՄՈՒ-ի հիմնական ֆինանսավորողը: Որպես ԵՄ արտաքին աջակցության ծրագրերի մաս, ԵԿՀ-ն աշխատում է գործընկեր երկրների հետ՝ կիրառելու մարդկային ռեսուրսների զարգացման ռազմավարություններ սոցիալ-տնտեսական զարգացման համար: ԵԿՀ-ի քաղաքականության ուսումնառության մոտեցումը հնարավորություն է տալիս **Վրաստանին և Հարավ-արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ-ի երկրներին** մասնակցել միջպետական և միջտարածաշրջանային ուսումնառության գործընթացներին (Եվրոպական Կրթական Հիմնադրամ 2008ա): Մեկնաբաններից մեկն այն կարծիքին է, որ ԵՄ-ն զգալի քայլեր է կատարել դեպի այդ տարածքի պետությունների կառավարությունների կողմից՝ ՄՅԿՈւ ոլորտի նկատմամբ պատասխանատվության ստանձնման երաշխավորումը (Սամլուվսկի 2004):

Ազգային քաղաքականության մշակում

ՄՅԿՈւ-ի վերաբերյալ ցկյանս ուսումնառության մոտեցման ընդունումը կարևոր նշանակություն ունի ազգային քաղաքականության մշակման համար: Պետական քաղաքականության շրջանակում պետք է մշակվեն օրենսդրական, կառավարման, ֆինանսական, ինստիտուցիոնալ, ուսումնական, տեղեկատվական, կանոնակարգող և որակավորումների շրջանակներ՝ շահագրգռելու մեծահասակներին ներգրավվել համակարգված ուսումնառության գործընթացում (Ջոնս 2005): Բացի դրանից ՄՅԿՈւ-ի առաջընթացի համար անհրաժեշտ են «գրավ» քաղաքականություններ՝ կապված այնպիսի ոլորտների հետ, ինչպիսիք են զբաղվածությունը, սոցիալական ապահովությունը, գյուղական վայրերի զարգացումը և աղքատության հաղթահարումը, ինչպես նաև տարբեր նախարարություններում և կառույցներում քաղաքականության ազդեցության մոնիթորինգ և գնահատում: Հետտորական

առունով ազգային զեկույցները շատ նման են իրար: Ակնհայտ է, որ ցկյանս ուսումնառության գաղափարը շատ երկրներում հանդես է գալիս որպես կրթության և ուսուցման ոլորտի տեսլական. այն նաև հանդիսանում է գաղափարական շրջանակ՝ քաղաքականության մշակման և ուղղորդող սկզբունք՝ ուսումնառության բոլոր համատեքստերում, այդ թվում՝ ՄՅԿՈՒ-ում, կրթության իրականացման և մասնակցության համար: Այնուամենայնիվ, հռետորությունից դուրս, ՄՅԿՈՒ իրականությունը տարբեր երկրներում տարբեր է՝ կախված վերջին պատմական զարգացումներից, սոցիալ-տնտեսական միջավայրից, տվյալ երկրի կրթության և ուսուցման համակարգից և ավանդույթներից, ինչպես նաև ՄՅԿՈՒ ոլորտի քաղաքականության, ղեկավարման և ՄՅԿՈՒ իրականացման մակարդակից: ՄՅԿՈՒ քաղաքականության առանցքային հարցը հետևյալն է՝ այն ի սկզբանե տնտեսական, սոցիալական, մշակութային քաղաքականությունն է, թե՞ այս բոլորի համակցումը: Շատ երկրներում, քաղաքականության սահմանումները ՄՅԿՈՒ –ի նկատմամբ որդեգրում են ամբողջական մոտեցում՝ կարևորելով թե տնտեսական և թե ոչ տնտեսական արդյունքները: Համենայն դեպս, երբ գործը հասնում է իրականացմանը, անկհայտ լարվածություն կա մարդկային ռեսուրսների զարգացման միջոցով արտադրողականության և մրցակցության շեշտադրման և մարդկային պոտենցիալի զարգացման միջոցով անհատների սոցիալական ներգրավման և հասարակությունների սոցիալական համախմբման շեշտադրման միջև: Քաղաքականության իրականացման ընթացքում առաջնությունը տրվում է տնտեսական օրակարգին՝ ավելի մեծ պետական աջակցություն տրամադրելով մասնագիտական ուղղվածություն ունեցող մեծահասակների կրթության, քան մեծահասակների լիբերալ/հանրամատչելի ուսումնառությանը:

Փաստորեն, շատ երկրներում ՄՅԿՈՒ քաղաքականություններն անբաժան են աշխատաշուկայի քաղաքականություններից, իսկ անհատի զարգացումը առաջնային նշանակություն ունի: Ավելի քիչ թվով երկրներ իրենց զեկույցներում նկարագրել են միայն շարունակական մասնագիտական կրթությունը և ուսուցումը: Սա ավելի շատ բնորոշ է վերջերս ԵՄ-ին անդամակցած երկրներին և Հարավ-արևմտյան Եվրոպայի ու ԱՊՀ-ի երկրներին: Այս երկրներին բնորոշ է նաև ֆորմալ կրթություն և ուսուցում իրականացնող հաստատություններում իրականացվող ՄՅԿՈՒ-ի և աշխատավայրերում հմտությունների զարգացման անհավասարակշիռ

վիճակը, քանի որ ավանդույթներն ու կառույցները սահմանափակում են սոցիալական գործընկերների միջամտությունը, իսկ գործատուներն ի վիճակի չեն կամ չեն ցանկանում լուծել աշխատավայրերում ուսումնառության հարցը:

Առ այսօր ԵՄ-27+ երկրներից միայն 17-են որդեգրել/ընդունել ցկյանս ուսումնառության որոշակի ընդհանուր ռազմավարություն, որը վերաբերում է կրթության և ուսուցման տարբեր ոլորտների: Ռազմավարության այս սահմանումներում սահմանված են քաղաքականության գերակա ուղղությունները և գործողությունների պլաններն ու կոնկրետ ծրագրերը, որոնք հնարավորություն կտան հասնել ավելի մեծ արդյունավետության և արդյունքների բարելավված քանակի ու որակի:

Ցկյանս ուսումնառությունն արդեն իրականություն է դառնում **Դանիայում, Իսլանդիայում, Նորվեգիայում, Շվեդիայում և Միացյալ Թագավորությունում:** Այդուհանդերձ, 2007թ. ութ երկրներ դեռ մշակում էին ընդհանուր ռազմավարական սահմանումներ, իսկ յոթ երկրներ շարունակում են հետամուտ լինել ցկյանս ուսումնառության քաղաքականությունների՝ առանց ցկյանս ուսումնառության որևէ հանընդհանուր ռազմավարության (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): **Կիպրոսն ու Ռումինիան**, որոնք դեռ իրենց հանընդհանուր ռազմավարությունների մշակման փուլում են, նշում են, որ բավականին դժվար է ազգային մակարդակով քննարկում ծավալել և արձագանքել տարբեր շահագրգիռ խմբերի տեսանկյուններից: **Ռումինիայի** զեկույցում նաև նշված է, որ մասնագիտական ուսուցումից բացի, ՄՀԿՈւ մյուս բաղադրիչները «ենթակա չեն համախմբված/փոխկապակցած ռազմավարությունների, քաղաքականությունների կամ հատուկ կանոնակարգերի»: Ընդհանուր առմամբ ԵՄ-27+ երկրների մեծ մասում հիմնական մարտահրավերը քաղաքականության իրականացումն է: **Շվեյցարիայում** պետության ուշադրությունը միշտ էլ ուղղված է եղել մեծահասակների մասնագիտական կրթությանն ու ուսումնառությանը, և ներկա պահին այնտեղ ազգային մակարդակով քննարկվում է ՄՀԿՈւ սահմանումը:

Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում համարվում է, որ ՄՀԿՈւ-ն առաջին հերթին էվոլյուցիոն դեր ունի «շարժիչն աշխատեցնելու» և/կամ տնտեսական աճին և աղքատության հաղթահարմանը նպաստելու գործում: Ավելի քիչ է շեշտադրվում ՄՀԿՈւ-ի դերը քաղաքացիական ինտեգրման և սոցիալական

համախմբվածության հասնելու և ժողովրդավարական արժեքներն ու ինստիտուտներն առաջ տանելու գործում: **Իսրայելում** համարվում է, որ ՄՅԿՈՒ-ն առանցքային ներդրում ունի ներգաղթողների ինտեգրման, սոցիալական աճի և մրցունակության գործում: **ԱՄՆ**-ում գտնում են, որ ՄՅԿՈՒ-ն նպաստում է տնտեսական աճին՝ բարձրացնելով մեծահասակների գրագիտության մակարդակը, աջակցելով ներգաղթողների կողմից անգլերեն լեզվի ուսանմանը և ներդրում ունենալով աշխատուժի հմտությունների կատարելագործման մեջ: **Հարավ-արևելյան Եվրոպայի** առանձին երկրներում, **ԱՊՅ**-ում և **Վրաստանում** տեսանելի են ՄՅԿՈՒ ոլորտի քաղաքականություններ մշակելիս համակարգված մոտեցման նախնական փուլերը:

Հարավ-արևելյան Եվրոպայում իրականացվող այնպիսի ծրագրեր, ինչպիսին է օրինակ **ԴիՎիՎԻ** Ինթերնեշնալի կողմից իրականացվող «Ցկյանս ուսումնառության քարոզչության» ծրագիրը, փորձում են քաղաքականություն մշակողների և մյուս շահագրգիռ կողմերի ուշադրությունը կենտրոնացնել քաղաքականության համալիր շրջանակ ունենալու անհրաժեշտության վրա, որը կհամախմբի մի շարք տնտեսական, աշխատանքային, կրթական և սոցիալական քաղաքականություններ, ինչպես նաև փորձ են անում ցույց տալ հմտությունների և, հետևաբար, մեծահասակների կրթության ոլորտում ներդրումների ռազմավարական նշանակությունը (Դիմիտրովա 2007): Այդուհանդերձ, այդ տարածքում Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի բարեփոխումների մեծ մասը հիմնականում միտված են նախնական ուսուցմանն, իսկ ՇՄՈՒ-ի ծավալը սահմանափակ է: Նախկին **Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիան** մշակել է Մեծահասակների կրթության Պլան և խթանում է կրթական ցածր մակարդակ ունեցող ազգային խմբերից անհատների մասնակցությունը: **Սերբիան** մշակել է Մեծահասակների կրթության զարգացման ռազմավարություն, Մասնագիտական կրթության զարգացման ռազմավարություն (2006թ.), գործողությունների պլաններ և ակտիվ աշխատաշուկայի քաղաքականություններ: 2006թ. **ԱՊՅ** երկրների Միջխորհրդարանական ժողովն ընդունեց մեծահասակների կրթության մասին մոդելային օրենսդրություն: Ընդունվեց նաև *Մեծահասակների կրթության Ջարգացման Հայեցակարգ* և կազմվեց **ԱՊՅ** անդամ պետություններում Հայեցակարգի իրականացման գործողությունների պլան:

Ուկրաինան ձգտում է ԵԿԶ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերն ընդգրկել համալիր քաղաքականության ուսումնառության գործընթացում: **Մոլդավիան** հայտնում է, որ 2003թ. երկրում ընդունվել է «Մարդկային ռեսուրսների կողմնորոշման, ուսուցման և մասնագիտական կրթության հայեցակարգ» և Աշխատանքային Օրենսգիրք, որտեղ սահմանված են գործատուների՝ աշխատողների ուսուցման հետ կապված պարտականությունները: **Վրաստանում**, որտեղ ցկյանս ուսումնառության ռազմավարության մշակման աշխատանքները սկսվել են 2008թ., ՄՅԿՈՒ-ն իրականում սահմանափակ գործնական արտահայտություն է ստացել՝ չհաշված գործազուրկների համար իրականացվող մի քանի ծրագրերը: Սակայն Կրթության նախարարությունն ընդունում է, որ անհրաժեշտ է թիրախ դարձնել «ռիսկային գոտում» գտնվող խմբերին: **Ռուսաստանում** 2006-2010թթ. Կրթության զարգացման դաշնային թիրախ ծրագիրը այն հիմնական փաստաթուղթն է, որը սահմանում է շարունակական կրթության գաղափարը և նրա առանձին տարրերը, այդ թվում՝ մեծահասակների կրթությունը:

Մեծահասակների Կրթության և Ուսումնառության (ՄՅԿՈՒ) կառավարում

Կառույց (օրինակ՝ կառավարություն կամ կրթություն իրականացնող հաստատություն), որը կազմավորվում է որոշումներ կայացնելու և դրանք իրականացնելու նպատակով: Կառավարման հիմնական ուղղություններն են՝ տեղեկատվություն, խորհրդատվություն, մասնակցություն, գործընթացներ, հավասարություն, իրավունքներ և բարեփոխումներ:

Ճիշտ կառավարմանը բնորոշ են հստակ հաղորդակցությունը, թափանցիկ խորհրդատվական գործընթացները, տարաբնույթ մասնակցությունը, մասնակցության հավասարությունը, որոշումների կայացման թափանցիկ գործընթացը, բավարար ռեսուրսների և կարողությունների առկայությունը և հաշվետվողականությունը: Այս չափանիշները կիրառելով՝ պարզ է դառնում, որ ՄՅԿՈՒ կառավարումը տարածաշրջանի շատ երկրներում բազմաթիվ մարտահրավերների առջև է կանգնած:

Կախված այն հանգամանքից, թե ՄՅԿՈՒ-ն համարվում է հանրային՞ սեփականություն, մասնավոր՞, թե՞ երկուսն էլ՝ ՄՅԿՈՒ մոդելը կլինի հանրային ծառայության մոդել,

շուկայական մոդել կամ այդ երկուսի համակցումը: Այսպիսով, ՄՅԿՈՒ-ում պետության ընդհանրական դերը տարածաշրջանում ընդգրկում է հետյալ սպեկտորը՝ հանրային սեփականություն համարվող ՄՅԿՈՒ-ի առաջխաղացման գործում պետության կողմից ներգրավման բարձր մակարդակից մինչև ներգրավման նվազագույն մակարդակ, երբ ՄՅԿՈՒ-ն այս կամ այն չափով իրականացվում է շուկայական ուժերի կողմից: Պետության դիրքորոշումը այդ սպեկտորի վերաբերյալ կարող է պայմանավորված լինել գաղափարախոսությամբ, ավանդույթներով, ռեսուրսներով կամ այս երեքով էլ: **Շվեդիայում**, որտեղ պետության սահմանված դերը տարածն ուսումնառության համար հնարավորություններ ստեղծելն է, կրթության բոլոր տեսակների նպատակներն ու կանոնակարգերը, բացի մեծահասակների լիբերալ կրթությունից, սահմանվում են պետության կողմից: Գործում է ֆորմալ եռակողմ համակարգ, որը վերահսկում է ՄՅԿՈՒ-ն աշխատուժի մակարդակում: **Լեհաստանում** կրթական ծառայությունների շուկան սկսեց ընդլայնվել 1990-ականներին: Ինչպես նշել է Կրթության նախարարության պատվերով աշխատող արտաքին գնահատման թիմը, «կրթության քաղաքականության ընդունված ընդհանուր կանոնը սահմանում է, որ աշխատաշուկայի կարիքները լավագույնս բավարարվում են կրթական ծառայությունների՝ լիովին ազատ շուկայի կողմից: Պետությունը, հնարավորություն ստեղծելով մեծահասակների համար լրացնելու իրենց կրթությունը դպրոցատիպ ուսուցման դասընթացների միջոցով, չի միջամտում ոչ-դպրոցատիպ առաջարկի գործողության շրջանակին: Գործազուրկների համար իրականացվող դասընթացների որակն ու արդյունավետությունը բարելավելու նպատակով զբաղվածության գործակալությունները ստիպված եղան 2007թ. դիտարկել/ուշադրություն դարձնել կրթություն իրականացնող կազմակերպության ունեցած որակի հավաստագիրը և վերլուծել առաջարկվող ուսուցման դասընթացները՝ պարզելու, թե դրանք որքանով են համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին: Պետության կողմից ֆինանսավորվող դասընթացներ իրականացնողներին մրցութային հիմունքներով ընտրելը ևս համարվում է կատարելագործված որակի և համապատասխանության հասնելու մի միջոց: **Գերմանիայում** պետության գործողությունները ՄՅԿՈՒ ոլորտում ընդհանուր առմամբ սահմանափակվում է սկզբունքների և հիմնական պարամետրերի սահմանմամբ և կանոնների ներդրմամբ, որոնք երաշխավորում են ՄՅԿՈՒ-ի պատշաճ կազմակերպումն ու աջակցությունը: Այդ կանոններն այնուհետև ձևակերպում են

ստանում Դաշնության օրենքներում և Լեհդեռում, որը սահմանում է այն հիմնական պայմանները, որոնցով առաջնորդվում է շարունակական կրթությանը տրամադրվող պետական աջակցությունը: Ըստ **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում** ցկյանս ուսումնառության համապարփակ համակարգ ստեղծելու, կառավարելու և դրա համար վճարելու փոխարեն կառավարության դերն է վերաբաշխել ռեսուրսներն այնպես, որ առկա հնարավորությունները լինեն համարժեք, կանոնավոր և արդյունավետ: **Սերբիայում** նկատում են, որ չնայած ընդունվել էր մեծահասակների կրթության զարգացման ռազմավարություն, սակայն ազգային համատեքստը բարդացնում է ՄՀԿՈւ հարցերի լուծումը: **Հայաստանում** նկատում են, որ մեծահասակների կրթությունը ազգային մակարդակում որևէ կառույցի կողմից չի ղեկավարվում կամ համակարգվում: Այնուամենայնիվ, միտում կա ներգրավելու սոցիալական գործընկերներին Մասնագիտական կրթության և ուսուցման ղեկավարման և Մեծահասակների կրթության ռազմավարության գործողությունների պլանի մշակման գործում: **ԱՄՆ-ում** Կրթության Դաշնային Դեպարտամենտը սահմանում է քաղաքականություններ, իրականացնում է համապատասխան ադմինիստրատիվ/վարչական աշխատանքներ և համակարգում է դաշնային ֆինանսական աջակցությունը, որը տրամադրվում է նահանգներին ՄՀԿՈւ նպատակով: Անհրաժեշտ են միջազգային, ազգային, տարածաշրջանային, տեղական, համայնքային և ինստիտուցիոնալ կառույցներ և շրջանակներ՝ ցկյանս կրթության հնարավորությունների տրամադրման և մասնակցության ընդլայնման համար, մասնավորապես ՄՀԿՈւ ոլորտում: Բազմաթիվ երկրներում ՄՀԿՈւ ոլորտի պատասխանատվությունը բաշխված է տարբեր գերատեսչությունների միջև, որոնք պատասխանատու են ՄՀԿՈւ-ի որոշակի ասպեկտի/բաղադրիչի համար: Այս իրավիճակը բնորոշ է **Լատվիային**, որտեղ ինը նախարարություն, այլ շահագրգիռ կողմերի հետ մեկտեղ, ներգրավված են ցկյանս ուսումնառության ռազմավարությունների և գործողությունների պլանների մշակման գործում: **Մոլդավիայում** ևս ՄՀԿՈւ ոլորտում ներգրավված են բազմաթիվ նախարարություններ: Ընդհանուր առմամբ համակարգումն ու համագործակցությունը տարբեր նախախարությունների միջև բացակայում է շատ երկրներում: Ֆորմալ ՄՀԿՈւ քաղաքականության, իրականացման և ֆինանսավորման պատասխանատվությունը կարող է պատկանել Կրթության նախարարությանը կամ

Կրթության և Աշխատանքի նախարարությանը միաժամանակ: Սոցիալական հարցերի նախարարությունը զբաղվում է առանձին մեծահասակ ուսումնառուների համար եկամտի ապահովմամբ, Ֆինանսների նախարարությունը՝ ֆինանսական խթանիչների ապահովմամբ, իսկ բազմաթիվ այլ նախարարություններ ՄՅԿՈՒ են ապահովում քաղաքացիական ծառայողների և բնակչության տարբեր խավերի/սեկտորների համար: Երբ ՄՅԿՈՒ-ն պետական/հանրային աջակցություն է ստանում, նախարարությունների (ոչ կրթության) ֆինանսավորման դերը շատ ազդեցիկ է լինում այն դեպքերում, երբ հուսալի ֆինանսավորում չկա կրթություն իրականացնողների համար, կամ այդ ֆինանսավորումը շատ քիչ է, ինչպես **Պորտուգալիայում:**

Տարածաշրջանում ՄՅԿՈՒ կանոնակարգման մոդելները տարբեր են: Այդուհանդերձ, որպես հանրային կառավարման սկզբունքների մի մաս աստիճանաբար ավելի է կարևորվում ցածր օղակների կողմից որոշումների կայացումը (սուբսիդիարությունը), և որոշումների կայացման իրավազորությունը տրվում է այն մարմիններին, որոնք որքան հնարավոր է մոտ են կանգնած ՄՅԿՈՒ գործունեությանը: Այն համոզմունքը, որ ներպետական իրավասու մարմինները արդյունավետ և արդյունավոր ծառայություններ են մատուցում, շատ երկրներում հուշող տեղաշարժ է կենտրոնացված կառավարության ուղղակի վարչական վերահսկողությունից դեպի գործառնական վերահսկողության ապակենտրոնացում: Ի լրումն, մի շարք երկրներում այն կարծիքին են, որ ապակենտրոնացում նշանակում է ակնհայտ հրաժարում պատմական «վարչահրամայական» տնտեսությունից: Մի քանի երկրներում այս մոտեցումը զուգահեռվում է կրթություն իրականացնող կազմակերպությունների միջև մրցակցության առաջացմամբ, որն իրականացվում է կամ որոշակի կրթական ծառայությունների մատուցումը մասնավոր հատվածին փոխանցելով, կամ հանրային ոլորտում ներդնելով շուկայականին նմանվող հարաբերություններ: Պատասխանատվության սրվող բևեռացումից և տարածաշրջանային անհավասարության խորացումից խուսափելու համար անհրաժեշտ է ապակենտրոնացմանը զուգահեռ ներդրումներ կատարել՝ զարգացնելու տեղական իշխանությունների և կրթություն իրականացնող կազմակերպությունների՝ ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու հմտությունները և բարելավելու կենտրոնական կառավարության կանոնակարգումը՝

ՄՅԿՈւ չափորոշիչների, կատարողականության և որակավորումների որակի հետ կապված հաշվետվողականության ապահովման նպատակով:

Որոշ երկրներ ՄՅԿՈւ պատասխանատվությունը փոխանցել են **տեղական ինքնակառավարման մարմիններին** կամ տեղական մակարդակի այլ իրավասու մարմիններին: **Պանիայում** 2001թ. Մեծահասակների կրթության բարեփոխման արդյունքում մեծահասակների կրթության իրականացման պատասխանատվությունը բաշխվեց պետական, տարածքային և տեղական իշխանությունների միջև: **Ֆինլանդիայում, Նորվեգիայում, Պորտուգալիայում և Շվեդիայում** մեծահասակների կրթության քաղաքականությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների/քաղաքապետարանների կողմից: 2001թ. ի վեր **Հունգարիայում** ՄՅԿՈւ ոլորտում ընդլայնվել է մարզերի դերը: **Ֆրանսիայում** մարզերն ու համայնքները ներգրավված են ՄՅԿՈւ ոլորտում կամ ուղղակիորեն՝ իրականացնելով տարբեր գործողություններ, կամ անուղղակիորեն՝ ապահովելով գործող կազմակերպությունների և ասոցիացիաների ֆինանսավորումը: **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում** ապակենտրոնացումը դեռևս գտնվում է զարգացման վաղ փուլում: 2006թ., **Ռուսաստանում** Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի ապակենտրոնացմանը նախապատրաստվելու փուլում, ԵԿՀ-ն աջակցություն տրամադրեց Մասնագիտական կրթության և ուսուցման գործող կենտրոնների տեղացի վերապատրաստողների և կառավարիչների վերապատրաստման ծրագրի իրականացմանը (Եվրոպական Կրթական Հիմնադրամ, 2006թ):

ՄՅԿՈւ-ն կառուցվածքով բազմատարր է: Բազմաթիվ գործընկերներ շահագրգռված են ՄՅԿՈւ ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման գործում, և հաճախ բոլորն էլ առաջնորդվում են տարբեր արժեքներով, վերաբերմունքով, ակնկալիքներով, նպատակներով և մոտեցումներով: Շահագրգիռ կողմ հանդիցանում է կառավարությունն իր բոլոր մակարդակներով, օրենքով սահմանված կարգով գործող գործակալությունները, սոցիալական գործընկերները, կրթություն իրականացնող հանրային կազմակերպությունները, ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ), քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ), կրթություն իրականացնող առևտրային

կազմակերպությունները և, ի վերջո, պոտենցիալ ուսումնառուներն ու նրանց ներկայացուցիչները: Գիշտ ղեկավարման միջոցով հնարավոր է հաստատել արդյունավետ ուսումնական գործընկերություններ: Համակարգային մակարդակում այս համագործակցությունը կհաստատվի պետական մարմինների, սոցիալական գործընկերների քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի միջև և ներսում, իսկ կրթության իրականացման մակարդակում՝ կրթական հաստատությունների և տվյալ տարածքի սոցիալական գործընկերների, քաղաքացիական հասարակության և ուսումնառուների ներկայացուցիչների միջև և այդ կառույցների ներսում:

ԵՄ-27+ երկրներից մի քանիսի փորձը ցույց է տալիս, որ մղում կա համակարգելու և կապակցելու մեծահասակների ուսումնառության կառույցները՝ տարանուն խմբերի միջև կապեր հաստատելու և համակողմանիորեն ընդգրկելու նպատակով: ՄՀԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերներն ու քաղաքացիական հասարակությունն ավելի ու ավելի են ճանաչվում որպես գործընկերներ, և նրանց ներգրավածությունը բազմաշերտ է՝ սկսած խորհրդատվությունից, մինչև մասնակցություն ազգային կամ տարածաշրջանային ֆորմալ կառույցներում: Սոցիալական գործընկերները նաև իրենց ազդեցությունն ունեն ՄՀԿՈՒ քաղաքականության վրա կոլեկտիվ սակարկության գործընթացի միջոցով: Որոշ երկրներում, օրինակ **Ավստրիայում, Կիպրոսում, Դանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Նիդեռլանդներում, Նորվեգիայում և Շվեդիայում**, վաղուց արդեն գործում է սոցիալական գործընկերներին և շահագրգիռ կողմերին ներգրավելու ավանդույթը, իսկ ինստիտուցիոնալ կառույցներում ներգրավված է ազգային, մարզային և տարածքային խորհրդատվական հանձնաժողովների համակողմանի համացանց, որի նպատակն է հաստատել բարձր մակարդակի սոցիալական երկխոսություն, որն ընկած է ցկյանս ուսումնառության հիմքում: Աշխատուժի վերապատրաստման հարցերում **Մեծ Բրիտանիան** շարունակում է հավատարիմ մնալ կամավորության սկզբունքին: Պետության միջամտությունը հիմնականում ուղղված է գործատուների և անհատական պահանջարկի խթանմանը՝ բարելավելով կրթության իրականացման որակն ու համապատասխանությունը պահանջարկին և ձևավորելով աջակցող ծառայություններ, որոնք վերապատրաստումը գրավիչ են դարձնում գործատուների համար (այդ թվում՝ գործատուների մասնակցությամբ Ոլորտային հմտությունների

խորհուրդների ձևավորում, որակավորումների բարեփոխված համակարգ, որը պետք է գործարկվի 2008թ.-ից և «Վերապատրաստում ձեռքբերումների նպատակով» ծառայություն): Այդուհանդերձ, ինչպես նշված է 2006թ. կառավարության պատվերով կազմված հմտությունների վերաբերող հաշվետվության մեջ, որակավորումների ներկայիս վատ բազան այս մոդելի արդյունք է, և կառավարությունը նշել է, որ ապագայում կդիտարկի կանոնակարգման հարցը, եթե գործատուները կանավոր հիմունքներով ավելի մեծ ներդրումներ չկատարեն վերապատրաստումների ոլորտում: Ի լրումն, 2006թ. ի վեր, ընդլայնելով Ուսումնառության Միասնական Հիմնադրամի մոդելը, Յունիոնը՝ **Միացյալ Թագավորությունում** ուսումնառության արհեստակցական միությունների ակադեմիան, մեծ դերակատարում է ունեցել արհեստակցական միությունների դերի և բնույթի վերափոխման գործում, մասնավորապես իրենց անդամների՝ ուսման հնարավորությունների միջնորդավորման գործում:

Գործընկերությունն իր արտահայտությունն է գտնում միջգերատեսչական, միջինստիտուցիոնալ և միջկազմակերպչական համագործակցության տեսքով ազգային, մարզային և տարածքային մակարդակներում: Այն աջակցում է «միացյալ» մտածողությանն ու պատասխաններին և համակարգված ու տարբեր ոլորտներին ուղղված քաղաքականության մշակմանը՝ ի շահ ցկյանս ուսումնառության համընդհանուր համակարգի ստեղծման: Մի շարք երկրներ արդեն ստեղծել են ՄՀԿՈւ-ն համակարգող համազգային/մարզային կառույցներ: Այդ կառույցները իրար են կապում մեծահասակների ուսումնառությամբ հետաքրքրված կողմերին, այդ թվում՝ նախարարություններ, սոցիալական գործընկերներ, օրենքով կրթություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսումնառուներ և ոչ կառավարական շահեր՝ ՄՀԿՈւ որակն ու քանակը բարելավելու նպատակով: Ելնելով իրենց անկախության աստիճանից՝ այդ կառույցներն իրականացնում են տարբեր գործառույթներ՝ քաղաքականության մշակում և իրականացում, քաղաքականության համակարգում և/կամ քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում: 2000թ. ի վեր Մեծահասակների կրթության շվեյցարական ֆորումը հանդես է գալիս որպես խորհրդատվական խորհուրդ՝ կազմված դաշնային գրասենյակների (կրթություն և ուսուցում, զբաղվածություն, մշակույթ), գավառների և **Շվեյցարիայում** ՄՀԿՈւ իրականացնող կազմակերպությունների

ներկայացուցիչներից: 2005թ. ստեղծվեց երկրորդ հանձնաժողովը՝ Մեծահասակների կրթության Շվեյցարիայի համակարգող հանաժողովը՝ ՄՀԿՈՒ-ի հետ կապված հարցերը Համադաշնության և մարզերի միջև համակարգելու նպատակով:

Համակարգերի և իրականացման մակարդակում գործընկերություն հաստատելու մեկ այլ օգտակար մոտեցում է տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ մարզային և տեղական համացանցերի ստեղծումը, որը կաշխատի աշխատաշուկայի քաղաքականության, սոցիալական քաղաքականության, ՄՀԿՈՒ քաղաքականության մշակման վրա և կապահովի տարածքային իրազեկում: **Գերմանիայում**, կրթության և հետազոտության դաշնային նախարարությունը խրախուսում է եվրոպական Սոցիալական Հիմնադրամի (ESF)-ի աջակցությամբ գործող մարզային համացանցերին՝ ժամանակակից և ինտեգրված ցկյանս ուսումնառության ծառայությունների մատուցման նպատակով: **Նիդեռլանդներում** մշանակալի նորարարություն համարվեց ուշադրության կենտրոնացումը տարածաշրջանային համացանցերի վրա: **Ռուսաստանում** «Ուսումնառու համայնք» նախագծի շրջանակներում փորձարկվում են մեծահասակների ուսումնառությունն առաջ տանող նոր մոտեցումներ: **ԱՄՆ-ում** տեղի գործատուները հաճախ ՄՀԿՈՒ իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ մասնակցում են տեղի աշխատուժի համար իրականացվող մասնագիտական ՄՀԿՈՒ-ի բովանդակության վերաբերյալ որոշումների կայացմանը: Իրականացման մակարդակում, մի շարք երկրներում ուսումնառուներն աստիճանաբար ներգրավվում են կրթություն իրականացնող ինստիտուտների ղեկավարման գործում, ինչը հանդիսանում է արդյունավետ կառավարման առանցքային տարր՝ ուղղված անհատի և համայնքի ուսումնառության կարիքների արձագանքմանը:

Այնուամենայնիվ, մի շարք ԵՄ-27+ երկրներում բացակայում են արդյունավետ և անկողմնակալ կրթության և ուսումնառության ապահովման նպատակով նորարար ուսումնական գործընկերությունները (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): Օրինակ, այնպիսի երկրներ, ինչպիսիք են **Կիպրոսը**, **Էստոնիան**, **Հունաստանը**, **Լիտվան**, **Լեհաստանը**, **Սլովենիան** և **Թուրքիան**, դեռևս գտնվում են ինստիտուցիոնալ կառույցների համակարգի ստեղծման նախնական փուլում: **Ռումինիայում** ուսումնառության ուղիների և ուսումնառության արդյունքների ճանաչման վրա

ազդում են փոխկապակցվածության պակասն ու սափմանափակ սոցիալական գործընկերությունը: Այս երկրների պրոբլեմը կայանում է նրանում, որ սոցիալական գործընկերների ներգրավման նախնական փուլում բիզնես շահեր ներկայացնող կազմակերպությունները թույլ են բևեռացված (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): ԵՄ-ին վերջերս անդամակցած երկրներում արհմիությունների ներգրավման արդյունքում զգալիորեն փոփոխվել է թե՛ արհմիությունների և թե՛ գործատուների դերակատարումը: **Հարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում և Վրաստանում**, որտեղ այս մարտահրավերները սուր բնույթ են կրում, գործընկերության մշակույթը դեռ բավարար չափով ձևավորված չէ, սոցիալական գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավումը ղեկավարման գործում շարունակում է մնալ հռետորության մակարդակում այս երկրներից շատերում:

Մի շարք երկրներում ֆորմալ ՄՀԿՈւ-ում տեսանելի համակարգման և կապակցվածության օրակարգը միշտ չէ որ վերաբերվում է նաև ոչ ֆորալ ՄՀԿՈւ-ին: Ձեկույցներում նշված է, որ երկրների մեծամասնությունում չի ընդունվում քաղաքացիական հասարակության դերը որպես ՄՀԿՈւ ոլորտի առանցքային դերակատար: Այդուհանդերձ, ոչ ֆորմալ ՄՀԿՈւ-ն չի մնում առանց համակարգման մեխանիզմների: Ոչ ֆորմալ ՄՀԿՈւ իրականացնող կազմակերպությունների, իսկ որոշ դեպքերում նաև ուսումնառուների համագալիս/տարածաշրջանային ասոցիացիաների ներկայացուցիչները հաճախ իրենց դերն ունեն ազգային և տարածաշրջանային մակարդակում քաղաքականությունների ձևավորման վրա: Այս ասոցիացիաները կարող են նպաստել մասնակցությանը, խրախուսել որակյալ կրթություն, իրականացնել հետազոտական աշխատանքներ և մասնակցել ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող համագործակցության ծրագրերին: **Հայաստանում**, օրինակ, Մեծահասակների կրթության հայաստանյան ասոցիացիային անդամակցում են 36 հասարակական կազմակերպություններ: Այն դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերում հիմնական տեղական գործընկերն է: **Վրաստանում**, Մեծահասակների կրթության վրաստանյան ասոցիացիան նույն դերակատարումն ունի: Երկու ասոցիացիաներն էլ, տարածաշրջանի բազմաթիվ այլ ազգային ասոցիացիաների հետ միասին, հանդիսանում են Մեծահասակների Կրթության Եվրոպական Ասոցիացիայի (ՄԿԵԱ) անդամ :

Օրենսդրական դաշտ

Օրենսդրական դաշտում նկատվում է միտում՝ ապահովելու համակարգում, փոխկապակցվածություն և, որոշ դեպքերում, քաղաքականությունների, կառույցների, ֆինանսավորման, կրթության իրականացման և որակավորումների ինտեգրում:

Այնուամենայնիվ, այն լուրջ անկում է ապրել այն բանից հետո, երբ նոր քաղաքականությունն ուղղվեց հմտություններին և սոցիալական ներգրավմանը և անցում կատարվեց մեծահասակների կառավարվող կրթությունից՝ շուկայով առաջնորդվող մոդելի: Արդյունքում շատ ուսումնառուների համար վարձավճարները թանկացան: Այժմ կառավարությունը սկսել է առաջին հանրային քննարկումը այն հարցի շուրջ, թե ինչպես իրականացնել նմանատիպ կրթությունն այնպես, որ այն աջակցություն ստանա ապագայում՝ օգտագործելով պետական, մասնավոր և կամավոր հատվածների ռեսուրսները:

Վերջերս ԵՄ-ին անդամակցած շատ երկրներում, Զարավ-արևելյան Եվրոպայում, ԱՊՅ-ում և Վրաստանում քաղաքացիական հասարակության՝ ՄՅԿՈՒ իրականացնելու կարողությունները համեմատաբար թույլ են, իսկ ժողովրդավարական հասարակության անցնելու փուլում ՄՅԿՈՒ-ի դերը միշտ չէ, որ ճիշտ է ընկալվում կամ ընդունվում: Զետևաբար, ՄՅԿՈՒ գործողությունների նկատմամբ համեմատաբար քիչ հարգանք և աջակցություն կա: Այս տարածքում վճռորոշ է հանրամատչելի/լիբերալ ՄՅԿՈՒ-ին տրվող արտաքին աջակցությունը: Սկսած 1990-ականների կեսերից Սերբիայում ԶԿ-ները դարձել են «ՄՅԿՈՒ-ին աջակցող դեղահաբեր», անկախ իրենց երբեմն անհուսալի իրավական և ֆինանսական կարգավիճակից: 2008թ. կային 2020 տեղական և 62 արտասահմանյան ԶՄ-ներ, որոնց մի մասը ֆինանսավորվում էր պետական բյուջեների/տեղական համայնքների կողմից: Մեծամասնությունը ֆինանսավորվում է տեղական և միջազգային դոնորների կողմից, ծրագրերին մասնակցելու միջոցով: **Նախկին Զարավսլավիայի Զանրապետություն Մակեդոնիայում** ֆորմալ ՄՅԿՈՒ-ն է եղել «բացարձակ գերակշիռը», իսկ ոչ ֆորմալ

ՄՅԿՈՒ-ն համարվել է «նրցակիցը»: Հայաստանում ավելի քան 300 ՀԿ-ների ակտիվ դերակատարում ունեն քաղաքացիական հասարակության զարգացման գործում:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ-ներ)

ՏՀՏ ուսուցումն իրականացվում է ֆորմալ և ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի շրջանակներում, սակայն առավել տարածված է ոչ ֆորմալ ՏՀՏ ուսուցումը: ՏՀՏ հմտություններն այժմ համարվում են առանցքային կարևորության հիմնական հմտություններ, իսկ «թվային կարողությունը» համարվում է չորրորդ առանցքային հմտությունը Հոլանդների Եվրոպական Շրջանակում: ՏՀՏ հմտությունները նաև ուսումնառությունն ընդլայնելու զգալի պոտենցիալ ունեն՝ հնարավորություն տալով մեծահասակներին օգտվել ճկուն, գրավիչ և անձնավորված ուսումնական ծրագրերից, իրենց հարմար վայրում, ժամանակին և ըստ իրենց կարիքների մակարդակի: Այնուամենայնիվ, ՄՅԿՈՒ-ն կարող է սրել/խորացնել թվային բաժանումը, քանի որ լավ չներկայացված խմբերը կարող են հիմնովին խրվել աճող բաժանման ստորին մասում: Ավելին, ՄՅԿՈՒ-ի սոցիալական և անձնական կողմերի վրա ՏՀՏ-ների թողած ազդեցությունն անհրաժեշտ է չեզոքացնել, մասնավորապես այն խմբերի համար, որոնք կոնկրետ աջակցություն են ստանում ՄՅԿՈՒ միջավայրում իրենց գործընկերների հետ փոխազդեցությունից: Փատորեն, բոլոր ԵՄ-27+ երկրներում բնակչության համար իրականացվում են թվային գրագիտության ընդհանուր ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են ինչպես կառավարության, այնպես էլ մասնավոր հատվածի կողմից և որոնք հատուկ ուշադրություն են դարձնում խոցելի խմբերին: Շատ երկրներում ՏՀՏ-ները հիշատակվում են թե որպես թեմա, և թե որպես մեթոդ, սակայն կիրառման ծավալները տեսանելի չեն: Մի շարք երկրներում իրականացվում է թվային գրագիտության պետական ռազմավարություն: **Նորվեգիայում**, «Թվային Գրագիտություն Բոլորի համար ռազմավարությունը» նպատակ է սահմանել մինչև 2008թ. ինտեգրել թվային գրագիտությունը կրթության և ուսուցման բոլոր մակարդակներում: Մշակվել են հիմնական թվային կարողությունների պետական չափորոշիչներն ու շրջանակը: **Էստոնիայում** տառաճանաչության ուսուցումը հիմնականում դիտվում է ՏՀՏ-հմտությունների ձևով: **Պորտուգալիայում** ֆորմալ և ինֆորմալ ՄՅԿՈՒ ծրագրերում ներգրավված բոլոր ուսանողները սովորում են

տիրապետել ՏՀՏ-ին: **Թուրքիայում**, կրթության պետական կենտրոնները և թուրքական ՏՏ Ասոցիացիան ուսուցում են տրամադրում եվրոպական համակարգչային վարորդական լիցենզիայի տրամադրման համար: **Հարավ-արևելյան Եվրոպայում**, **ԱՊՀ-ում** և **Վրաստանում**, ՄՀԿՈւ շուկայի ամենահզոր տարրերից մեկը առևտրային կազմակերպությունների կողմից ՏՀՏ ուսումնառության տրամադրումն է:

ԵԿՀ-ն աշխատել է մի շարք E-ուսումնառության նախաձեռնությունների վրա, օր.՝ **Իսրայելում** E-ուսումնառության վերաբերյալ զեկույցը, և **Ալբանիայում**, **Ռուսաստանի Դաշնությունում** և **Սերբիայում** փորձնական առցանց դասընթացները:

Կրթության իրականացում միգրանտների համար

Մեծահասակների կրթության մասին ԵՄ Հաղորդագրության (2006) մեջ միգրանտները որոշարկվել են որպես ՄՀԿՈւ թիրախ խումբ: Ողջ Եվրոպայով մեկ 2000թ. ի վեր ԵՄ Գրունդվիզ ծրագիրն աջակցել է միգրանտների և ազգային փոքրամասնությունների ուսումնական կարիքներին ուղղված ուսումնական գործընկերություններին և միջպետական ծրագրերին ԵՄ-27+ երկրներում: Միգրանտների համար պետական ֆինանսավորմամբ կրթություն իրականացվում է շատ երկրներում և հաճախ կրում է ոչ ֆորմալ բնույթ: Միգրանտների համար իրականացվող ՄՀԿՈւ ինտեգրման միջոցառումներ են՝ ներածական ծրագրերը, լեզուների ուսուցումը և քաղաքացիական, սոցիալական և մշակութային կողմնորոշման դասընթացները 15 երկրներում՝ **Ավստրիա**, **Խորվաթիա**, **Կիպրոս**, **Չեխիայի Հանրապետություն**, **Էստոնիա**, **Ֆինլանդիա**, **Ֆրանսիա**, **Գերմանիա**, **Հունաստան**, **Հունգարիա**, **Լատվիա**, **Նիդեռլանդներ**, **Նորվեգիա**, **Լեհաստան** և **Թուրքիա**: Աշխատաշուկայում ինտեգրվելուն նպաստող նպատակային աջակցության մեխանիզմներ են գործում **Դանիայում**, **Հունաստանում**, **Պորտուգալիայում** և **Շվեդիայում**: 2006թ. **Ավստրիայում** հատուկ կազմված միջոցառումների միջոցով վերապատրաստվեցին մոտավորապես 39000 այլազգի ներկայացուցիչներ: **Ֆինլանդիայում** գոյություն ունի մեծահասակների լիբերալ կրթության վերահսկվող համակարգ, որն աջակցության իր մասն ունի ներգաղթողների լեզվական և սոցիալական ինտեգրման գործում: **Շվեդիայում**, 2006թ. մունիցիպալ ՄՀԿՈՒ մասնակիցների 40%-ը ներգաղթողներ էին:

Իսկ օրինակ, **Գերմանիայում և Նորվեգիայում**, միտում է նկատվում լեզվի և մշակութային իրազեկման դասընթացներում մասնակցությունը դարձնել պարտադիր: **Նիդեռլանդներում**, 2007թ. տվյալներով, բոլոր ներգաղթողները պարտադիր պետք է գրանցվեին և վճարեին լեզվի և քաղաքացիական ինտեգրման դասընթացների համար, անկախ այն հանգամանքից՝ նրանք վերջերս են դարձել այդ երկրի բնակիչ, թե վաղուց: **Իսրայելում**, լեզվական, սոցիալական և մասնագիտական ինտեգրման նպատակով եբրայերենի դասավանդումը մեծ թվով ներգաղթած բնակչությանը հրատապ գերակայություն է:

Բազմամշակութային ծրագրերն օգնում են ներգաղթած ծնողներին հասկանալ նոր մշակութային համակարգը և ծնողների սոցիալական դերը: Հայերենին չտիրապետող մարդկանց մեծ ներհոսքի պայմաններում, երբ բացակայում է համակարգված արձագանքը, **Հայաստանում** մի շարք ՀԿ-ներ, իրենց նախաձեռնությամբ և ռեսուրսներով, տրամադրել են հայերենի ուսուցման դասընթացներ: **ԱՄՆ-ում**, անգլերեն լեզվի դասավանդման նկատմամբ աճող պահանջակը բավարարելու համար ընդլայնվում են դաշնային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, ինչպես նաև նախաձեռնվում են նորերը: Մեծահասակների ESL ծառայությունները ևս իրականացվում են կազմակերպությունների կողմից, որոնք կարող են ստանալ դաշնային ֆինանսավորում կամ չստանալ: Այդպիսի կազմակերպություններ են հոգևեր, կամավոր հիմունքներով գործող և համայնքային կազմակերպությունները, թանգարանները, գրադարանները, լեզվի մասնավոր դպրոցները և գիտական հաստատությունները: Մեծ թվով անգլերեն սովորող մեծահասակների սպասարկում են կամավոր հիմունքներով գրագիտության ապահովման նպատակով գործող խոշոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերը: **Կանադայում**, «Կանադա նոր ժամանածների համար լեզվի ուսուցում» և «Լեզվի ընդլայնված ուսուցում» ծրագրերը ֆրանսերենի և անգլերենի անվճար դասընթացներ են առաջարկում նոր եկած մեծահասակներին, ովքեր դրա իրավունքն ունեն:

Ազգային փոքրամասնությունների համար ՄՀԿՈՒ իրականացվում է մի շարք երկրներում: Ռումինիայում պետական իշխանությունները համագործակցում են այն ՀԿ-ների հետ, որոնք աշխատում են Հռոմի ժողովրդի հետ՝ իրականացնելու Հռոմի իրավիճակի բարելավման ռազմավարությունը: Խորվաթիայում, Հռոմի ազգային ծրագրի մի մասը, ընդունված 2003թ., ուղղված է Հռոմի կրթությանը: **Խորվաթիայում**,

Մոնտենեգրոյում և Սերբիայում, «երկրորդ հնարավորություն ընձեռող» կրթական նախաձեռնությունները հիմնավորել են իրենց արդյունավետությունը՝ ազգային խմբերին՝ կրթության ոլորտ ներգրավելու գործում: **Վրաստանում**, հասարակական կազմակերպությունների ոլորտը ստանձնել է մի շարք նախաձեռնություններ, որոնց միջոցով ստեղծվեցին մեծահասակների երկու կրթական կենտրոններ, որոնք ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ են իրականացնում բազմաթիվ տարածաշրջանում:

Կանադայի Նունավուտ տարածքում, մեծահասակների կրթության համակարգի հիմքում ընկած է Inuit սոցիալական արժեքներն ու Inuit ավանդական գիտելիքին բնորոշ սկզբունքներն ու գաղափարները: Այս գաղափարներից մի քանիսը կրկին գործի են գցում մեծահասակների ուսումնառությունը՝ հմտությունների զարգացում գործնական աշխատանքի, ջանքերի, գործողությունների միջոցով, լուծումներ գտնելու ճանապարհին ռեսուրսներ ունենալն ու նորարարությունները, շարունակական ուսումնառություն և որոշումների կայացում քննարկումների և փոխզիջման միջոցով:

Մեծահասակների բարձրագույն կրթություն

Ազգային զեկույցներում մեծահասակների բարձրագույն կրթությանը վերաբերող տեղեկատվությունը սահմանափակ է: Բնակչության կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ մեծահասակների մասնակցությունը բարձրագույն կրթական հաստատությունների ավարտական կուրսերում որպես հասուն ուսանողներ ևս ավելացել է ողջ տարածաշրջանում: Մեծահասակների մասնակցությունը հետբուհական կրթությանը ևս ավելացել է: Օրինակ, **Ավստրիայի** Դանուբի համալսարանը Եվրոպայի առաջատարներից մեկն է համալսարանում ՇՄՈՒ իրականացման գործում: Ֆինլանդիայում ՄՅԿՈՒ իրականացնող խոշոր հաստատությունները համալսարաններն են: Բարձրագույն կրթության շրջանակներում իրականացվում է նաև ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ: Օրինակ, Դանիայում համալսարանական ընդլայնված դասընթացները ներկայացնում են ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի միջոցով իրականացված հետազոտությունները արդյունքները:

Միացյալ Թագավորությունում, Բազային Աստիճանը երկամյա լրիվ դրույքով (կամ համարժեք կես դրույքով) իրականացվող բարձրագույն կրթության դասընթաց է, որը

սովորաբար պարունակում է գործնական աշխատանքի զգալի տարր: 2007թ. կային 2500 Բազային Աստիճանի ծրագրեր, և 800 ծրագրեր էլ դեռ մշակման փուլում էին: Որոշ Բազային Աստիճաններ գործառույններին տրամադրվում են գործատուի հովանավորությամբ, իսկ մի մասն էլ հասցեագրված է այն անձանց, ովքեր ցանկանում են բարձրագույն կրթության որակավորում ստանալ կոնկրետ մասնագիտական բնագավառում: Բազմաթիվ շրջանավարտներ այն կարծիքին են, որ Բազային Աստիճանի անմիջական արդյունքը զբաղվածությունն է՝ համապատասխան արդյունաբերության մեջ կամ ֆիրմայում: Բազային Աստիճանները նաև կազմվում են այնպես, որ ուսանողները մասնագիտական հիմնարար գիտելիքներ ստանան: Բազային Աստիճան ծրագիրը, 2001թ. իր մեկնարկից ի վեր, գրանցել է մասնակիցների աճ մինչև 72000 մասնակից: Կառավարության թիրախը 100000 մասնակիցների ապահովումներ է մինչև 2010թ. Ուսանողների երկու երրորդը ընդունվելու պահին 21 տարեկան են լինում, և նրանց կեսից մի փոքր ավելին կանայք են:

Ըստ **Ռուսաստանի** զեկույցի, շարունակական կրթության համակարգի զարգացման արդյունավետ մեթոդ է կորպորատիվ համալսարանների ստեղծումը, որոնք կերաշխավորեն հիմնարար գիտելիքների ձեռք բերում և կապահովեն գործնական աշխատանքներ: **Չայաստանում** բարձրագույն կրթությունը կարևոր դերակատարում է ունենալու ցկյանս ուսումնառության քաղաքականության ներդրման գործում և այս առումով ձեռնարկում է «համապարփակ և հաջորդական քայլեր»: Ըստ **Կանադայի** Չամալսարանների և Քոլեջների Ասոցիացիայի, ավելի քան 400000 մեծահասակներ ներգրավված են կանադական համալսարանների կողմից առաջարկվող շարունակական կրթության դասընթացներում, որոնք կրեդիտներ են տալիս, կամ ոչ: Շարունակական կրթության դասընթացներից շատերի արդյունքում տրվում են վկայականներ կամ դիպլոմներ: Չամալսարանները կողմնորոշման ծրագրեր են կազմակերպում հասուն ուսանողների համար, ովքեր մուտք ունեն հնտությունների ուսուցման կենտրոններ, կարող են օգտվել ուսումնառության ճկուն գրաֆիկներից և այլընտրանքային ուսումնական մեթոդներից, այդ թվում՝ խտացված սեմինարներ հանգստյան օրերին, աշխատավայրերում աշխատողների ուսուցման ծրագրեր և առցանց կամ այլ հեռավար ուսուցման տիպեր:

Մեծահասակների կրթության և ուսուցման ճանաչում

ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի պատվիրակները պարավորվում են մշակել

տարբեր համատեքստերում իրականացված ուսումնառության արդյունքների փոխկապակցման մեխանիզմներ և երաշխավորել կրեդիտների փոխանցելիությունը տարբեր ինստիտուտների, ոլորտների և պետությունների ներսում և նրանց միջև:

(Ապագայի օրակարգ, Պար.19 (բ), էջ. 1)

ՄՀԿՈՒ արդյունքներն իրենց ազդեցությունն են թողնում թե՛ անհատի վրա (կարողություններ, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, վաստակ, առողջություն, կենսամակարդակ) և թե՛ ընդհանուրի վրա (արտադրականություն, տնտեսական աճ, գործազրկության չափ, նպաստների վճարումներ, առողջապահական ծախսեր), սոցիալական բնագավառում (սոցիալական համախմբվածություն, ընտանիքի կայացում, սոցիալական կապիտալ, քրեական դեպքերի նվազում), և քաղաքական ոլորտում

(քաղաքացիների անդամակցություն, քաղաքական մասնակցություն) այդ ազդեցությունը ևս տեսանելի է (Համամոնո և Ֆեյնշտեյն 2004; Շուլլեր և այլոք 2004; Եվրոպական Հանձնաժողով 2006բ; Եվրոպական Հանձնաժողով 2007գ):

Հետաքրքիր է այն, որ բացի վերոնշյալ ենթապարբերությունից, ո՛չ Համբուրգի Ռեչակագրում, ո՛չ էլ Ապագայի Օրակարգում շատ բան ասված չէ ՄՀԿՈՒ-ի արժեվորման մասին՝ վերջինիս արդյունքների ճանաչման, անվանման և վկայագրման առումով: 1997թ. ի վեր, այնուամենայնիվ, ՄՀԿՈՒ-ի արժեվորման և դրա օգտակարությունը տեսանելի դարձնելու հարցը տարածաշրջանում առանցքային խնդիր է դարձել, ինչի արդյունքում ի հայտ են եկել մի շարք հրամայականներ, որոնք են՝ մեծահասակների կրթության համար կատարված ներդրման բացահայտ արդյունքը՝ ազգային և միջազգային նշանակություն ունեցող վկայականների և դիպլոմների տեսքով, ցույց տալու միջոցով, ուսումնառությունն ավելի գրավիչ դարձնելու անհրաժեշտությունը; ուսումնառության ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ տիպերի միջև կապեր ստեղծելու և դրանք ճանաչելու անհրաժեշտությունը՝ բազմապիսի միջավայրերում ուսումնառությունը խրախուսելու համար, դժկամ

մասնակիցներին խրախուսելու անհրաժեշտությունը՝ անկախ ուսումնառության ընթացքից, նրանց ունեցած ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման միջոցով և կարիերայի շարժունակության ծավալներն ընդլայնելու անհրաժեշտությունը:

Օրինակելի ցկյանս ուսումնառության մոդելը արժեվորում է բազմապիսի ուսումնական միջավայրերի տված կրթությունը՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ: Ուսումնառությունը ճանաչվում և պարզևատրվում է որակավորումների միջոցով, իդեալական տարբերակում՝ անկախ ձեռք բերման մեթոդից կամ վայրից, որակավորումները տեսանելի են դարձնում ուսումնառությունը, թե աշխատավայրում և թե հետագա կրթության և ուսուցման նպատակով ձեռք բերած գիտելիքին, հմտություններին և կարողություններին տալիս են շուկայական արժեք և «փոխարժեք»: Որակավորումների ազդեցությունն առավելագույնի հասցնելու համար, անհրաժեշտ է, որ որակավորումները դառնան որակավորումների բաց/թափանցիկ համակարգի մաս: Շատ երկրներում որակավորումների համակարգերը առ այսօր խառն են և միմյանց հետ կապակցված չեն, ինչի արդյունքում շփոթում են շահառու կողմերին, ուսումնառության ճանաչման պակաս կա, կան մուտքի դժվարություններ, փոխանցման և անհատների առաջընթացի հետ կապված դժվարություններ և անհատների ու հասարակությունների համար արժեքի ընդհանուր կորուստ: Մինչև վերջերս գրեթե բոլոր երկրներում որակավորումների հիմքում ընկած էին ներդրումները և ուսումնական ծրագիրն ավարտելը, ի հակադրություն տվյալ ուսումնառության արդյունքում սահմանված կարողությամբ պայմանավորված որակավորումների: Փաստորեն, բոլոր երկրներում հանրակրթական և ավագ միջնակարգ կրթության «երկրորդ հնարավորություն ընձեռող» ֆորմալ կրթությանը մասնակցելու միջոցով ձեռք բերված որակավորումները նույնն են ինչ հիմնական կրթության արդյունքում ստացվող որակավորումները: Նախնական կրթությունից և ուսուցումից դուրս որակավորումների թափանցիկության պակասը հրատապ խնդիր է ուսումնառուների և գործատուների համար տարածաշրջանի բազմաթիվ երկրներում:

Որակավորումների Եվրոպական Շրջանակ

Ուսումնառության և շուկայի շարժունակության նպատակով, երկրների ներսում և նրանց միջև համեմատելի որակավորումների առկայությունը հիմնարար պահանջ է ՄՀԿՈՒ-ում մասնակցության մակարդակի բարձրացման համար: Որակավորումների Եվրոպական Շրջանակը (ՈԵՇ) մետաշրջանակ է, որը փոխկապակցում է տարբեր երկրների որակավորումների շրջանակներն ու համակարգերը և դրանով իսկ աջակցում է շարժունակությանը: Այն լրացնում է Եվրոփասս-ին, որն ապահովում է ստանդարտ պրոտֆել, որը մարդկանց հնարավորություն է տալիս թափանցիկ կերպով նկարագրել իրենց հմտությունները, և Մասնագիտական կրթության և ուսուցման Եվրոպական կրեդիտային համակարգին (ՄԿՈւԵԿՀ), որը հեշտացնում է անհատի կողմից արտասահմանում մասնագիտական կրթության և ուսուցման ընթացքում ձեռք բերած գիտելիքի, հմտությունների և կարողությունների ճանաչումը: ՈԵՇ-ին բնորոշ հիմնական գծերն են՝ որակավորումների ութ հղման մակարդակ, որոնք վերաբերում են ուսումնառության բոլոր տիպերին (ընդհանուր կրթություն, ՄԿՈՒ, բարձրագույն կրթություն, մեծահասակների կրթություն), Ուսումնառության արդյունքների օգտագործումը ուսումնառության բովանդակության որոշարկման նպատակով, մի շարք կամավոր սկզբունքներ, որոնք վերաբերում են որակի ապահովմանն ու առանցքային հմտություններին, կախերայի ուղղորդում և ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության վավերացում:

Ակնկալվում է, որ **ԵՄ-27 երկրները** մինչև 2010թ. իրենց ազգային որակավորումների համակարգերը կհամապատասխանեցնեն ՈԵՇ-ին, իսկ մինչև 2012թ. հետմինջնակարգ կրթական հաստատությունների կողմից տրվող բոլոր որակավորումները հղում կունենան ՈԵՇ-ի որակավորումների 8 մակարդակներից մեկին:

Որակավորումների ազգային համակարգեր

Որակավորումների համակարգերը վերանշակվում և փոփոխվում են շատ երկրներում, ինչպես նաև շատ երկրներ միջոցառումներ են ձեռնարկում որակավորումները համակարգելու համար: Թեև հնարավոր է բաց, ճկուն և փոխկապակցված համակարգեր մշակել առանց համընդհանուր ազգային

որակավորումների շրջանակի (ՈԱՇ), այնուամենայնիվ, երկրների մեծ մասը որոշել են ընտրել այս ուղին: ՈԱՇ մշակելու հիմնական նպատակներն են՝ ստեղծել արակավորումների չափորոշիչներ, հնարավոր դարձնել որակավորումների համեմատելիությունը, բարելավել անհատների՝ ուսումնառություն ստանալու հնարավորությունը, փոխանցելիությունն ու առաջընթացը, բարելավել կրթության և ուսուցման իրականացման որակը: Որակավորումների շրջանակը կարող է հզոր գործիք դառնալ՝ թափանցիկության խթանման, համակարգման, ողջ ցկյանս ուսումնառության ընթացքի փոխկապակցվածության և հաջորդականության ապահովման համար: Այդուհանդերձ, ավանդաբար տարբեր տիպի »ներդրումային վերահսկողության« (օրինակ՝ ուսանողների թիվը, որակավորված ուսուցիչների թիվը, կենտրոնացված և միատեսակ դասապլաններ) հիման վրա կառուցված համակարգերի վերափոխումն այնպիսի համակարգերի, որոնք հիմնականում ղեկավարվում և ֆինանսավորվում են համաձայնեցված ուսումնառության արդյունքների և ուսումնական գործընթացի որակի հիման վրա, ժամանակատար է, պահանջում է զգալի մարդկային և նյութական ռեսուրսներ և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

ԵՄ-27+ չորս երկրներ՝ **Ֆրանսիան, Իռլանդիան, Մալթան և Միացյալ Թագավորությունը**, ունեն որակավորումների՝ պատշաճ կերպով գործող ազգային շրջանակներ: Տասնյոթ երկրներ պարտավորություն են ստանձնել մշակել համընդհանուր ՈԱՇ և ներկայումս առաջ են տանում այդ գործընթացը՝ ստեղծելով աշխատանքային խմբեր, կազմելով օրենքների նախագծեր, փորձարկելով ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցումները և/կամ ձևավորելով մասնակի որակավորումների շրջանակներ ՄԿՈԻ-ի համար: Յոթ երկրներ դեռ պաշտոնապես չեն ստանձնել ՈԱՇ մշակելու պարտավորություն, սակայն ներկայումս քննում են հնարավոր տարբերակները (Եվրոպական Հանձնաժողով, 2007թ):

Հարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ-ի երկրներում, Վրաստանում, ազգային որակավորումների շրջանակներ մշակելը համարվում է առաջնային գերակայություն: Բնորոշ դժվարությունների շարքում է այն հանգամանքը, որ զբաղմունքների/մասնագիտական դասակարգումների համակարգերը ցույց չեն տալիս տարբեր մակարդակներում կարողությունների մակարդակը, կրթության իրականացման որակի տարբերությունները մեծ են, թեստերն եւ քննությունները

կազմում են հենց դպրոցները/քոլեջները, տրված ավարտական վկայականներում ճշգրտված չեն ձեռք բերված որակավորումները, իսկ ուսումնառության արդյունքները՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ, չեն ճանաչվում: Բոլոր երկների համար ամենամեծ դժվարություններից մեկը համաձայնեցված մասնագիտական պրոֆիլների վերածումն է ուսումնառության արդյունքների: 2007թ. ԵՄ-ն համաձայնեց ֆինանսավորել Մոնտենեգրոյի որակավորումների շրջանակի մշակումը և այդ նպատակով դեռևս 2006թ. ստեղծվել էր Ազգային Հանձնաժողով: Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիայում ՈԱՇ-ը փորձարկվել է 2005-2008թթ. Մի շարք ԱՊՀ երկրներում ԵԿՀ-ի ղեկավարությամբ մի քանի ԱՊՀ երկրներում իրականացվող տուրիզմի ոլորտի որակավորումների վերաբերյալ փորձնական ծրագրերի արդյունքներն արդեն պատրաստ են ազգային մակարդակով կիրառելու համար: **Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում**, որտեղ արդեն կազմվել են քաղաքական հայեցակարգերի նախագծերը, ԵԿՀ-ն շարունակում է աջակցություն տրամադրել ՈԱՇ ծրագրերին: **Վրաստանում**, ՈԱՇ-ի կազմումը պետք է մշակակալի ազդակ լինի մեծահասակների կրթության առաջխաղացման համար, քանի որ այն հնարավոր կդարձնի ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչումը: Ռուսաստանի Դաշնությունում, գործատուների նախաձեռնությամբ հիմնվել է մասնագիտական կրթության և ուսուցման որակավորումների նոր գործակալություն: ՈԱՇ-ի շուրջ քննարկումները շարունակվում են 2008թ.-ին (Եվրոպական Հանձնաժողով 2008ա):

ԱՄՆ-ում, ՄՀԿՈԼ ծրագրերում օգտագործվում են բազմազան գնահատումներ, և ծրագրերն ունեն միմյանցից տարբերվող գրաֆիկներ/ժամատախտակներ, որոնցում հաշվի են առնված «բոլոր հաճախորդների կարծիքները»: Վերջին տարիներին, մասնավորապես Ջեկոնյցների ազգային համակարգի (ՀԱՀ) ի հայտ գալուց հետո, կրթական գործակալությունները և պետական գերատեսչությունները փորձել են բարելավել գնահատման գործելակերպերը, օրինակ, ազգային մակարդակում կանոնակարգող ընթացակարգերը՝ որոշելու և հաստատելու, թե որքանով են թեստերը հարմար կրթական ձեռքբերումը չափելու համար:

Ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության վավերացում

Տարածաշրջանում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման շեշտադրումը նոր չէ: 1995թ., «Եվրոպական Հաշվետվություն՝ Դասավանդում և ուսումնառություն, դեպի ուսումնառու հասարակություն» փաստաթղթում հմտությունների ճանաչումը համարվում է առանցքային բաղադրիչ նոր գիտելիքի ձեռքբերման գործում, քանի որ այն նպաստում է երիտասարդների և բանվորների/աշխատողների աշխատունակությանը/աշխատանք ձեռք բերելու կարողությանը (Եվրոպական Հանձնաժողով 1995):

Ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության վավերացումը կարող է վճռորոշ գործիք լինել մեծահասակներին շահագրգռելու շարունակելի/վերսկսելի ուսումնառությունը, քանի որ այն տեսանելի է դարձնում այնպիսի կարողություններ, որոնցից մեծահասակը միգուցե անտեղյակ էր և անհատին դնում է ՈԱՇ-ի համապատասխան մակարդակում, եթե տվյալ երկրում ՈԱՇ կա:

Այն նաև նվազեցնում է հնարավորությունների ծախսերը՝ կրճատելով կամ նվազեցնելով կրկին սովորելու վրա ժամանակ և գումար ծախսելու անհրաժեշտությունը, եթե արդեն տվյալ անհատը այդ ուսումնառությունը ստացել է: Այն կարող է անհատին որևէ ուսումնական ծրագիր մուտքի, մասնակի որակավորման կամ ամբողջական/լրիվ որակավորման վավերացման հնարավորություն տալ: ԵՄ-27+ երկրներում կան մի շարք եվրոպական սկզբունքներ, որոնք սահմանում են որ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման ներդրման համընդհանուր բազան: 2007թ. ի վեր կամավոր հիմունքներով կազմված Եվրոպական ուղեցույցերը համապատասխան քաղաքական պլատֆորմ են ապահովել այս հարցի շուրջ Եվրոպական համագործակցության շարունակականության համար: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը, որը, փաստորեն, օրակարգային հարց է հիմնականում **ԵՄ-27 երկրների և Նորվեգիայի** համար, կիրառելի է ՄՀԿՈՒ բոլոր մակարդակներում: Շատ երկրներում, գործում են բավականին ճկուն մուտքի պահանջներ «երկրորդ հնարավորություն ընձեռող» ֆորմալ ՄՀԿՈՒ ստանալու համար՝ միջնակարգ դպրոցի ցածր, բարձր դասարանների և հետմիջնակարգ որակավորումներ ձեռք բերելու համար, ինչը նվազեցնում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունը վավերացնելու անհրաժեշտությունը՝ այդ մակարդակներում «երկրորդ հնարավորություն ընձեռող» կրթություն ստանալու համար: Այնուամենայնիվ, վավերացման գործընթացը կարող է մասնակի (կամ բացարձակ)

արտոնություններ տալ այդ մակարդակներում որակավորումների ձեռքբերման համար, ինչպես օրինակ **Նորվեգիայում**: Ի լրումն, նախկին ուսումնառության ինֆորմալ ճանաչումը որպես կանոն զետեղված է «երկրորդ հնարավորություն ընձեռող» ՄՀԿՈՒ-ի նախագծման և մատուցման մեջ և ուսումնառության աջակցության մասին որոշումներում, ինչպես օրինակ զուգահեռ տառաճանաչության, լեզվական հմտություններ և սովորելու հմտություններ: Ընդհանուր առմամբ, սակայն, վավերացման հարցը օրակարգում բարձրացվում է մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառի կողմից, որպես անհատների, ձեռնարկությունների և հասարակության հմտությունների մակարդակների բարձրացման միջոց, ինչպես նաև անհատների՝ մուտքի դյուրացման և շարժունակության միջոց: Չորս ԵՄ-27+ երկրներ (**Բելգիա (Նի), Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա և Սլովենիա**) արդեն հասել են իրականացման առաջադեմ մակարդակի: Մյուս ութ երկրները՝ **Ավստրիա, Բելգիա (Ֆր), Զեխիայի Հանրապետություն, Լիտվա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա և Շվեդիա**, մոտ են կանգնած ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը իրենց երկրների որակավորումների համակարգում ինտեգրելուն: Այդուհանդերձ, ոչ բոլոր երկրներում են կազմավորվել և գործում անհրաժեշտ կառույցներ (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգը Ֆրանսիայում ներկայումս վերաբերվում է բոլոր որակավորումներին: Եզակիրոն, այն ամբողջովին ինտեգրացված համակարգ է, որտեղ որակավորումը շնորհվում է անկախ տվյալ կրթական կամ ուսուցման ուղուց կամ հաստատությունից: 2005 թ. 20,000 թեկնածուներ լրիվ որակավորում են ստացել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունը վավերացնելով, որոնց թվում էին նաև 3000 թեկնածուներ, որոնց լիարժեք որակավորում շնորհվեց Ձբաղվածության նախարարության կողմից (Եվրոպական Հանձնաժողով 2007թ): **Պորտուգալիայում** Նոր Հնարավորությունների Նախաձեռնությունը (2005) փորձում է արագացնել աշխատուժի կրթական մակարդակի բարձրացման գործընթացը և 1,000,000 ակտիվ աշխատողների որակավորել մինչև 2010թ.: կարողությունների ճանաչման, վավերացման և վկայագրման ազգային համակարգերի, ինչպես նաև մեծահասակների կրթության և ուսուցման դասընթացների և նոր հաստատագրված մոդուլային ուսուցման միջոցով: 2000թ. հիմնված Կարողությունների ճանաչման, վավերացման վկայագրման

Կենտրոնների համազգային համացանցը 2008թ. բաղկացած էր 457 կենտրոններից՝ տեղակայված իրենց համայնքներում արմատավորված տեղական, պետական կամ մասնավոր, մարմիններում: **Ղանիայում**, քաղաքացիական հասարակության հատվածը փոխգործակցել է Կրթության նախարարության հետ՝ մշակելու մի շարք գործիքներ, որոնք աջակցելու են անհատներին լիբերալ ՄՀԿՈՒ-ի միջոցով ձեռք բերած իրենց կարողությունների գնահատման և արձանագրման գործում: **Նիդեռլանդներում**, 2001թ. ի վեր, Նախկին Ուսումնառության Հավատարմագրման Գիտելիքի Կենտրոնները աջակցություն են տրամադրել կրթություն իրականացնող կազմակերպություններին և գործատուներին՝ նախկին ուսումնառության վավերացման գործում: Պետական իշխանությունների և տվյալ ոլորտի միջև համաձայնեցված որակի կոդեքսը երաշխավորում է գործընթացի որակը: **Նորվեգիայում** գտնում են, որ անհրաժեշտ է համակարգի առավել նպատակային առաջխաղացում, քանի որ հետազոտությունները ցույց են տալիս, որ գործառույթը մասնավորապես և հանրությունն ընդհանրապես շատ քիչ բան գիտեն իրենց կարողությունները գնահատելու իրավունքի և հնարավորությունների մասին: **Գերմանիայում**, օգտագործվում է ProfilPASS-ը՝ գրանցելու վկայագրված հմտությունները, այդ թվում՝ ինֆորմալ ճանապարհով ձեռքբերած հմտությունները: Այն այժմ կիրառվում է ողջ երկրում՝ որպես ձեռք բերած հմտությունների ապացուցման, անձնական կրթական հեռանկարների խրախուսման և ինֆորմալ ուսումնառության նկատմամբ հանրության առավել մեծ ուշադրության գրավման միջոց: Ուսումնառության ճանաչման Կանադական Ինստիտուտը նվիրվել է **Կանադայում** գիտելիքի և հմտությունների ճանաչման միջոցների բարելավմանը: Այն աշխատում է կրթողների, աշխատավայրերի, կառավարությունների և մասնագիտական խմբերի հետ՝ իրականացնելու այնպիսի ռազմավարություններ, ինչպիսին է Նախկին Ուսումնառության Գնահատումը և ճանաչումը (ՆՈՒՀԳ), ուղղված ուսումնառության ճանաչմանը, որակի ապահովման չափորոշիչների և գործընթացների մշակմանը և ներգաղթողների ինտեգրման դյուրացմանը: 2006թ. Ինստիտուտը թողարկեց Նախկին Ուսումնառության Գնահատման և ճանաչման Սկզբունքներ, որը ուղեցույց է գիտական միջավայրում և աշխատավայրում ՆՈՒՀԳ-ի չափանիշների մշակման համար: Հիմնականում բոլոր պետական քոլեջները ճանաչում են նախկին ուսումնառությունը, զոնե իրենց մի քանի ծրագրերում:

Բրիտանական Կոլումբիան, Ցվեբեկը և Օնտարիոն ևս առաջարկում են ճանաչել և գնահատել մեծահասակների նախկին ուսումնառությունը միջնակարգ դպրոցի մակարդակում, մասնավորապես այն անձնաց համար, ովքեր դեռ չեն ավարտել իրենց ծրագրերը: Օնտարիոյում, Կրթության նախարարությունը ֆինանսավորում է այն դպրոցական խորհուրդներին, որոնք առաջարկում են գնահատել և ճանաչել այն մեծահասակների նախկին ուսումնառությունը, որոնք դեռ աշխատում են իրենց միջնակարգ դպրոցի վկայականի կամ դիպլոմի վրա: Այս գործընթացն ունի երկու առանցքային տարր՝ դժվար է նախկին ուսումնառության գնահատումը մարզային դասապլանների քաղաքականության փաստաթղթի հիման վրա կազմած դասընթացի կրեդիտների շնորհման համար, և համարժեքությունը վերաբերում է իրավասու կրթական կառույցների անհատական հատկանիշների գնահատմանը:

Ձեկույցներում կոնկրետ հղում չի արվում միգրանտների ոչ ֆորմալ կամ ֆորմալ նախկին ուսումնառությանը, թեև այս գործընթացը պոտենցիալ ունի հմտությունների բարձր մակարդակ ունեցող միգրանտների դեպքում, ովքեր ձգտում են, որ իրենց կարողություններն ու որակավորումները, որոնք ձեռք են բերվել ներգաղթից առաջ, ճանաչվեն ժամանման երկրում:

Ավելին, կախված այն բանից, թե միգրանտը ծագումով որ երկրից է, ՈԱՇ-ը պետք է հատկապես օգտակար լինի այս առումով առաջիկա տարիներին: Կանադայում, Լեզուների Յենանիշների Կանադական Կենտրոնը փորձագիտական կենտրոն է, որը հիմնվել է անգլերենի և ֆրանսերենի պետական չափորոշիչներին աջակցելու համար: Այդ չափորոշիչները նկարագրում, չափում և ճանաչում են մեծահասակ ներգաղթողների և ապագա ներգաղթողների երկրորդ լեզվի իմացությունը: Կենտրոնը խրախուսում է իրենց հենանիշների կիրառումը որպես Կանադայում երկրորդ լեզվի իմացության գործնական, արդար, վստահելի պետական չափորոշիչներ կրթական, ուսուցման, համայնքային միջավայրերում և աշխատավայրում:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման միջոցառումները բոլոր երկրներում դեմ են առնում մարտահրավերների: Շատ երկրներում չկա որակավորումները՝ ուսումնառության արդյունքների տեսքով նկարագրելու ավանդույթ, բոլոր մակարդակներում բարդ իրավիճակում են տեխնիկական և մասնագիտական աջակցության կարողությունները, այդ գործընթացը դժվար է առաջ գնում, ժամանակատար և ծախսատար է: Ավելին, հետագա ուղեցույցների և

մեթոդների մշակման կարիք կա: **Սլովենիայում**, գործատուները պնդում են, որ իրենք ի վիճակի չեն իրականացնել վավերացման գործընթացներ: Սակայն առանց նրանց համագործակցության համակարգը չի կարող արդյունավետ գործել: Մշակութային մարտահրավերները չպետք է թերագնահատել: **Սլովենիան** իր զեկույցում նշում է, որ թե՛ ֆորմալ կրթական համակարգի ներկայացուցիչները և թե՛ սոցիալական գործընկերները կասկածներ ունեն ոչ ֆորմալ ուսումնառության վավերացման միջոցով ձեռք բերած որակավորումների որակի վերաբերյալ: Մյուս մտահոգությունը, հատկապես կապված ոչ ֆորմալ ուսումնառության հետ, այն է, որ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը կարող է խորացնել արհամարհանքը/անտարբերությունը որակավորում շնորհող ուսումնառության նկատմամբ: Այնպիսի զգացում կա, որ վավերացումը կարող է փոխել ոչ ֆորմալ ուսումնառության բնույթը՝ դարձնելով այն առավել ֆորմալ և ճանապարհ բացելով, դասընթացի ընթացքում կամ ավարտելիս, նրա անմիջական գնահատման համար: Այս հարցերի լուծման համար անհրաժեշտ է կրթության և ուսուցման ոլորտի շահառու կողմերի, սոցիալական գործընկերների և քաղաքացիական հասարակության ներգրավում՝ բոլոր մակարդակներում շահառու կողմերի միջև այսպես կոչված «փոխադարձ վստահության գոտի» ստեղծելու նպատակով (Քոլզ և Օաթս 2005), դրանով իսկ ապահովելով վավերացման համակարգերի արժանահավատությունը, թափանցիկությունը և բոլորի կողմից ընդունելիությունը: Իրենց մասն ունեն շահագրգիռ կողմերի միջև ուժային հարաբերությունները: Ըստ **Ջունգարիայի** և **Սլովակիայի** զեկույցների, ամենամեծ խոչընդոտը ֆորմալ որակավորումների գերակշռումն է և այն հանգամանքը, որ կրթական և ուսուցման հաստատությունները շահագրգռված չեն իրենց ծրագրերից դուրս ուսումնական գործունեության ճանաչմամբ: Որոշ երկրներում մասնակցությունը ֆորմալ ուսումնառությանը շարունակում է մնալ նախապայման (հաճախ՝ օրենսդրական) որակավորումների ձեռք բերման և կրթության և ուսուցման հաջորդ մակարդակ անցնելու համար: Ֆորմալ կրթության և ուսուցման ոլորտի շահագրգիռ կողմերը արտահայտում են այն մտահոգությունը, որ ոչ ֆորմալ և ֆորմալ ուսումնառության վավերացումը կարող է հանգեցնել «չափորոշիչների ցածրացման»: Բացահայտ կամ թաքնված կերպով, տարբեր քննարկումներում գլուխ են բարձրացնում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Ո՞ր գիտելիքն է արժեքավոր» և այս առումով ոչ ֆորմալ

ուսումնառության կարողությունը: Բացի այդ, առավել լայն հասարակության մեջ անհանգստություն կա որակավորումների արժեզրկման և ֆորմալ մասնակցության միջոցով ձեռք բերած առավելությունների նվազեցման շուրջ: Մեկ այլ մարտահրավեր է, մասնավորապես ՄՀԿՈՒ ոլորտում, այն, որ վավերացման համակարգերից փաստորեն օգտվում են հիմնականում այն անձինք, ովքեր ունեն գործող որակավորումների ամենաբարձր մակարդակները (Վերքուին 2007): Սա այսպես կոչված «երկսայր սրի» էֆեկտն է, քանի որ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը կիրառվում է ավելի շատ ընդարձակելու, այլ ոչ թե նեղացնելու ցածր հմտություններ և բարձր հմտություններ ունեցող անհատների միջև եղած ճեղքը/անհամապատասխանությունը: Ի վերջո, վավերացման գործընթացները, հնարավոր է, որ աշխատավայրերում ունենան խառը ազդեցություն: Այն կարող է բարելավել աշխատողների/գործառույցների շարժունակությունը և, այսպիսով, նպաստել ազատ շուկայական տնտեսության վազքի էֆեկտին, սակայն նվազեցնել գործատուներին խթանող միջոցները՝ շարունակել ներգրավված մնալ այս գործընթացում:

Մեծահասակների Կրթության և Ուսումնառության Որակը

ԿՈՆՖԻՆՏԵԱ V –ի պատվիրակները առաջադրում են հետևյալ հարցերը՝

Ինչպե՞ս կարելի է ավելի բարելավել մեծահասակների ուսումնառության պայմանները . . . Ինչպիսի՞ միջոցառումներ և բարեփոխումներ պետք է ձեռնարկվեն ավելի մեծ . . . որակի հասնելու համար:

(Ապագայի Օրակարգ, Պար. 16, էջ13)

Որակի հարցը ԵՄ օրակարգում բացահայտ կերպով հայտնվեց այն բանից հետո, երբ Լիսաբոնի Օրակարգը նպատակ սահմանեց մինչև 2010թ. ԵՄ-ում կրթության և ուսուցման համակարգերը դարձնել համաշխարհային որակի հղման կետ: Եվրոպական Հանձնաժողովի կողմից 2004թ. ընդունված Որակի Ապահովման Ընդհանուր Շրջանակը (ՈԱԸՇ) հղումային շրջանակ է ԵՄ-27+ երկրներում ՄԿՈՒ

որակի զարգացման համար համակարգերի և իրականացման մակարդակում: Նպատակն էր բարելավել ուսումնառության արդյունքները և ընդլայնել ՄԿՈՒ համակարգի թափանցիկությունը՝ անհատների շարժունակությանը նպաստելու նպատակով: Որակի հարցին զարկ տրվեց 2005թ. ՄԿՈՒ-ում Որակի Եվրոպական Ցանցի (ՈԵՑ- ՄԿՈՒ) ստեղծմամբ, որտեղ ԵՄ-27+ երկրների մեծամասնությունը և Եվրոպական սոցիալական գործընկերությունների ներկայացուցիչները փոխանակում են իրենց փորձը և փոխգիշման են հանգում: 2008թ. ԵՄ մակարդակում, որակի շուրջ քննարկումների առանցքը նոր գործիքն էր՝ Որակի Ապահովման Հղումների Եվրոպական Շրջանակը (ՈԱՅԵՇ), և առաջարկվում էր CQAF-ը փոխարինել ՈԱՅԵՇ-ով, քանի որ նախորդը «սահմանափակ ազդեցություն էր ունեցել՝ Անդամ երկրներին՝ այն կիրառել խրախուսելու գործում» (Եվրոպական Հանձնաժողով 2008գ): Առաջարկվող ՈԱՅԵՇ ցուցանիշները ՄԿՈՒ-ում որակի բարելավումը համապատասխանեցնում են աշխատանքի տեղավորվելու ունակության մեծացման, առաջարկվող ուսուցման և օգտվողի կարիքների միջև համապատասխանության կատարելագործման և ցկյանս ուսումնառության հնարավորությունների խրախուսման եվրոպական նպատակներին (Եվրոպական Հանձնաժողով 2008գ): Ցուցանիշները իրենց նախնական տարբերակում համարվում են հավասարապես կիրառելի, թե ՆՄԿՈՒ-ում and ՇՄՈՒ-ում և ընդգրկում են ուսուցման կարիքների որոշարկումը, համապատասխանությունը, ներդրումը, մատչելիությունը, խոցելի խմբերի տարածվածությունը և հաջողության հասնելու մակարդակը, ավարտումը, աշխատանքի տեղավորվելը և աշխատավայրում ձեռք բերված հմտությունների կիրառումը:

Մեծահասակների ուսումնառության վերաբերյալ 2006թ. ԵՄ Հաղորդագրությունը (Եվրոպական Հանձնաժողով 2006ա) շեշտադրում է, որ մեծահասակների ուսումնառության իրականացումն առաջնային նշանակություն ունի մասնակցության բարձրացման և որակյալ ուսումնառության արդյունքների ապահովման գործում: Այն կոչ է անում ԵՄ-27+ երկրներին լուծել միմյանց հետ փոխկապակցված դժվարությունները կապված որակի ապահովման և ղեկավարման բարեփոխումների, ինչպես նաև կրթության ընդլայնման հետ: Ընդունելով այն հանգամանքը, որ ՄՀԿՈՒ-ի որակը կախված է բազմաթիվ փոխկապակցված գործոններից՝ Հաղորդագրությունը

հիմնականում անդրադառնում է կրթություն իրականացնողների, աշխատակիցների և մատուցման որակին:

Անդամ պետություններին կոչ է արվում ներդնել որակի ապահովման մեխանիզմներ, ներդրումներ կատարել մեծահասակների կարիքներին հարմարեցված դասավանդման մեթոդներում և նյութերում, ուսումնառության արդյունքները դարձնել բացահայտ, կատարելագործել աշխատակիցների հմտությունները և տրամադրել անհրաժեշտ աջակցություն՝ ներգրավելու այն մեծահասակներին, որոնք, գրեթե հավանական չէ, որ կմասնակցեն համակարգված ուսումնառության:

Պետական իշխանությունները վճռորոշ դեր ունեն ՄՅԿՈՒ-ի ղեկավարման գործում՝ ապահովելով համակարգերի և կրթություն իրականացնող կազմակերպությունների հաշվետվողականությունը՝ ստեղծելով կանոնակարգման շրջանակներ, սահմանելով որակի չափորոշիչներ, վկայագրելով այս ուսանողների կապը և այդ ծառայություններից օգտվողներին հայտնի դարձնելով կրթություն իրականացնող կազմակերպությունների կատարողականությունը այս ցուցանիշների համեմատ: Ընդհանուր առմամբ, պետական իշխանություններն ավելի շատ են շահագրգռված լինում որակյալ կրթության ապահովմամբ պետական ֆինանսավորման դեպքում, սակայն նրանք իրենց դերակատարումն ունեն մասնավոր հիմունքներով, շատ հաճախ տարբեր աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող ՄՅԿՈՒ-ի դեպքում՝ արդյունավետության և սպառողների շահերից ելնելով: Ջարմանալի չէ, որ ՄՅԿՈՒ-ի ոչ բոլոր բաղադրիչներն են ենթակա միևնույն տիպի կանոնակարգման: ԵՄ-27 երկրներում պետական որակի առանքցը ՄՅԿՈՒ-ում «երկրորդ հնարավորություն ընձեռող» կրթությունն է, ընդհանուր, կամ առավել հաճախ մասնագիտական, մեծահասակների ՆՄԿՈՒ և ՇՄՈՒ կրթությունը, որն իրականացվում է ուսուցում իրականացնող հաստատություններում: Որակի վերաբերյալ մտահոգությունները ավելի քիչ են արտահայտվում աշխատավայրերում իրականացվող ՇՄՈՒ-ի նկատմամբ, որի որակի ապահովումը, սովորաբար, պետական իշխանությունների իրավասությունից դուրս է: ՄԿՈՒ-ում որակի ապահովման ազդակի մեծ մասն արդյունք է կրթություն և ուսուցում իրականացնող հաստատությունների աճող ապակենտրոնացման և կառավարման ինքնավարության: Ֆինանսավորման ու իշխանության ապակենտրոնացումը առաջ է բերում ազգային/տարածաշրջանային

իրավասու մարմինների կողմից մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությունը՝ պարզելու, թե ներդրումները, որքանով են համապատասխանում ազգային նպատակներին և թիրախներին, ԵՄ-ում արդյունավետության և արդյունավորության ընդհանուր կարևորության շրջանակներում:

Գրեթե բոլոր երկրներում, արտաքին հաշվետվողականության խնդիրները ևս առաջադրվում են ոչ ֆորմալ ՄՀԿՈւ իրականացնողներին՝ պետական ֆինանսավորում ստանալու հարցում: Կախված պատմական, իրավական և ֆիսկալ կարգավիճակից՝ ընթացակարգերը տարբեր երկրներում տարբեր են, ինչպես և արտաքին հաշվետվողականության չափանիշների վերաբերյալ անկախ մարմինների երկպառակությունը (Bmlanger and Bochynek 2000):

Որակի ապահովման մեխանիզմներ

Ձեկույցներում նկարագրված են որակի ապահովման ընդհանուր համակարգերն ու մոտեցումները, և գրեթե բացակայում են արդյունավետության ցուցանիշների կամ չափման միջոցների վերաբերյալ քննարկումները: Ինչպես նաև, **Գերմանիայից** և **Սլովենիայից** բացի, որոնք նշում են, որ ՈԱ գործընթացների կենտրոնում ուսումնառումն է, ոչ մի ուրիշ երկրի զեկույցում հասցեագրված չէին ՈԱ մոտեցումների հիմքում ընկած արժեքները:

Ընդհանուր առամամբ, տարածաշրջանում համակարգերը գտնվում են զարգացման տարբեր փուլերում: **Սկանդինավյան երկրներում, Ավստրիայում, Գերմանիայում, Իռլանդիայում և Միացյալ Թագավորությունում** դեռևս մի քանի տարի առաջ հիմնվել են որակի ապահովման առաջատար համակարգեր և գնահատման անկախ մարմիններ:

Միացյալ Թագավորությունը «արձանագրել է կրթության իրականացման որակի հսկայական աճ, քանի որ միաժամանակ մենք իրականացրել ենք ինտենսիվ ծրագրեր՝ տնտեսական և սոցիալական կարիքները բավարարելու համար»: Ի լրումն, **Միացյալ Թագավորությունը** ՈԱ որակյալ ազգային համակարգեր մշակել է դեռևս ՈԱ-ի ներդրման վաղ տարիներին, և այդ համակարգերն ուղղված էին որակի հիմնարար բարելավմանը: Քանի որ համապատասխան կառույցները ցուցադրեցին իրենց՝ որակի կառավարման կարողությունը, ՈԱ պատասխանատվությունը աստիճանաբար

փոխանցվեց այլ կառույցների: Ի հակադրություն, **Չեխիայի Հանրապետությունը, Ռումինիան և Սլովենիան** ՄԿՈՒ հաստատություններում դեռ նոր են ներդնում ՈԱ համակարգեր, ցուցանիշներ և կառավարման գործիքներ: Գրեթե բոլոր երկրներում ՄՀԿՈՒ-ի իրականացումը տեղակայված է հիմնական դպրոցներում, ողջ դպրոցական համակարգի ՈԱ ընթացակարգերը, այդ թվում՝ ստուգումները, արտաքին քննություններն ու արտաքին գնահատումը, կիրառելի են նաև ՄՀԿՈՒ-ի նկատմամբ: Մի քանի ԵՄ-27 երկրներ ընդգծում են ESF-ի դերը ՄԿՈՒ-ի և ՇՍՈՒ-ի «մշակութային գնահատման» խթանման գործում: Ձեկույցներում նշվում են համակարգային մակարդակում ՈԱ հետևյալ մոտեցումները ֆորմալ ՄՀԿՈՒ-ի, և որոշ չափով նաև, ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ի նկատմամբ.

Կառավարման ազգային կամ տարածաշրջանային մարմինները, որոնք ունեն առավել լայն պարտականությունների, կոնկրետ կամ մասնակի, շրջանակ՝ իրականացնելու կրթության, այդ թվում՝ ՄՀԿՈՒ-ի, մոնիթորինգ և գնահատում, ավելի ու ավելի տարածում են գտնում և արդեն առկա են առնվազն 14 երկրներում՝ **Ռանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Գերմանիա, Վրաստան, Հունաստան, Իռլանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովենիա, Շվեդիա և Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիա: Շվեդիայում**, Հարցումների Հանձնաժողովը 2002-2004թթ. իրականացրեց մեծահասակների կրթության համազգային (կրթական ասոցիացիաներ և տեղական ացագ դպրոցներ) գնահատում: Վրաստանում 2006թ. հիմնվեց Կրթության Հավատարմագրման Ազգային Կենտրոն (ԿՀԱԿ): **Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիան** իր զեկույցում նշում է, որ Մակեդոնիայի Գնահատման Գործակալությունը դեռ պետք է որոշ ճանապարհ անցնի՝ ՈԱ գործակալությունների համար սահմանված եվրոպական չափորոշիչներին համապատասխանելու համար:

Ցուցանիշներ և հենանիշներ, որոնք արտացոլում են 2010թ. կրթությունն ու ուսուցումը

Մի շարք երկրներում առկա են ցուցանիշներ և հենանիշներ (որոնք կիրառվում են ԵՄ-27-ում) և CQAF: Միացյալ Թագավորությունում, կառավարության առաջնային գերակայությունները սահմանված են Պետական ծառայության համաձայնագրերում:

Նրանք սահմանում են այն կոնկրետ բարելավումները, որոնց կառավարությունն ուզում է հասնել կառավարության բոլոր վարչություններում և կատարողական ցուցանիշները, որոնք կկիրառվեն առաջընթացի չափման համար: Պետական ծառայության 30 համաձայնագրերից 11-ը վերաբերում են ՄՀԿՈՒ-ին, ուղղակի կամ անուղղակի կերպով:

Փոճագիտական ինստիտուտ/մարմին, որն աջակցում է դասավանդման ռեսուրսներ մշակելու և/կամ աշխատակիցների որակավորումների բարձրացման գործում, գոյություն ունի 13 երկրներում՝ **Ավստրիա, խորվաթիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Մոնտենեգրո, Նորվեգիա, Ռումինիա, Ռուսաստան, Սլովենիա և ԱՄՆ:**

Սերբիան իր զեկույցում նշում է, որ թեև ՄՀԿՈՒ ոլորտում կիրառելի որոշակի իրավական ակտեր մշակվում են Կրթության Բարելավման Ինստիտուտի և Կրթության Որակի և Գնահատման Ինստիտուտի կողմից, այնուամենայնիվ, ՄՀԿՈՒ-ն դեռ փնտրում է իր «իսկական տեղը» երկուսում էլ:

Որակի վերահսկման միջոցառումների, ինչպիսիք են Կրթություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը, ստուգումներն ու արտաքին գնահատումը, առանցքը կրթություն իրականացնող կազմակերպությունների համապատասխանությունն է: Հավատարմագրման միջոցով իրավասու պետական մարմինները փորձում են օրինականացնել մի շարք բազմաբնույթ կրթություն իրականացնող կազմակերպությունների գործունեությունը և երաշխավորել նրանց որակը՝ պահանջելով, որ նրանք բավարարեն մի շարք նվազագույն չափորոշիչներ ճանաչման, կամ պետական ֆինանսավորում ստանալու համար, եթե այդպիսին կա: Նման համակարգեր գործում են 15 երկրներում՝ **Ավստրիա, Բուլղարիա, Քստոնիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա, Ռումինիա և Միացյալ Թագավորություն:** Էստոնիայում

Էստոնիայում կառավարությունը լիցենզիա է տրամադրում մասնագիտական և ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ի իրականացման համար: Լատվիայում, 2003թ. Լատվիայի Մեծահասակների Կրթության Ասոցիացիան, համագործակցելով տեղական և տարածաշրջանային կառավարությունների ընկերակցությունների և Կրթության նախարարության հետ, կազմել է ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ ծրագրերի լիցենզավորմալ

հանձնարարականներ: Նշանակալի է, որ 2007թ. մեծահասակների ուսումնառության եւ Գործողությունների Պլանը (Եվրոպական Հանձնաժողով 2007ա) առաջարկեց կրթություն իրականացնողների և հավատարմագրող մարմինների որակի չափորոշիչների մշակման հետազոտություն:

Որակի պիտակներ և/կամ որակի չափորոշիչները, որոնց պետք է հասնել պետական ֆինանսավորում ստանալու համար ներառում են LQW... որը **Գերմանիայի** մոտ 600 հաստատություններում որակի գործընթացի կենտրոնում դնում է ուսումնառուին, GretaPlus-ը՝ **Ֆրանսիայում**, որը երաշխավորում է ուսումնառուներին՝ անհատականացված ծառայությունների տրամադրումը, INSI-QUEB, EQFM և ISO-ն՝ **Ավստրալիայում** և EduQUa-ն՝ **Շվեյցարիայում**: **Նորվեգիայում**, KVASS ծրագրի (2004-2005) արդյունքում ստեղծվեցին ՄՀԿՈՒ որակի մի շարք ընդհանուր չափորոշիչներ:

Որակի ախտահովման շրջանակները գործում են **Ավստրիայում**, **Գերմանիայում**, **Հունաստանում**, **Հունգարիայում**, **Իռլանդիայում** և **Ռումինիայում**: **Վրաստանը** նշում է, որ դասավանդման և դասապլանների որակի ապահովման համակարգը որոշ ՄԿՈՒ կենտրոններում զարգացման նախնական փուլն է:

Ներդրումների և արգասիքների մոնիթորինգ փորձագիտական մարմինների կողմից/ամենամյա հաշվետվության պահանջ.

սա գործում է **Գերմանիայում**, **Սլովենիայում**, **Իսպանիայում** և **ԱՄՆ-ում**:

Կրթություն իրականացնողների մակարդակում ՈԱ համակարգերը, ուր կրթություն իրականացնողները կամ ստիպված են, կամ ընտրում են երաշխավորել իրենց գործընթացների, գործելակերպերի և արդյունքների որակը, գործում են շատ երկրներում: Կրթություն իրականացնողի մակարդակում ճիշտ ղեկավարման դեպքում, ուշադրության կենտրոնում մեծահասակ ուսումնառուն է՝ կարիքների արդյունավետ վերլուծությամբ, արդյունավետ ադմինիստրատիվ համակարգերով, ռեսուրսների ճիշտ բաշխմամբ, նորարարական դասավանդման/ուսումնական մոտեցումներով, արհեստավարժ մասնագետներով, ազգային շրջանակների ներքո գործող ապացույցների վրա հիմնված մոնիթորինգի և գնահատման կայացած համակարգով և սերտ համագործակցելով այնպիսի մարմինների հետ, ինչպիսիք են ուսումնառուների կազմակերպությունները և սոցիալական գործընկերները (Եվրոպական Հանձնաժողով 2007ա):

Ձեկույցներում նշված են որակի նկատմամբ կրթություն իրականացնող կազմակերպությունների որդեգրած հետևյալ մոտեցումները՝ ինքնագնահատում, կրթություն իրականացնող կազմակերպություններին առաջադրվող հավատարմագրման պայմանների բավարարում և որակի պիտակների ձեռք բերում: **Ֆինլանդայում**, Մեծահասակների լիբերալ կրության մասին ակտի շրջանակներում, կրթություն իրականացնող կազմակերպությունները ստիպված են իրականացնել պարբերական ինքնագնահատում կամ մասնակցել արտաքին գնահատմանը:

Աշխատակիցների որակավորումներ և հմտություններ

Վերջին տասնամյակում զգալիորեն փոխվել է այն մարդկանց դերը, որոնք աշխատում են ՄՅԿՈՒ ոլորտում, այդ թվում՝ ղեկավար անձնակազմ, ծրագիր կազմողներ, ուղղորդող անձնակազմ, մենթորներ և վարչական կազմ, ինչպես նաև ուսուցիչներ, դասավանդողներ և վերապատրաստողներ: Նույնիսկ ինֆորմալ ՄՅԿՈՒ ոլորտում, աճում է ուսուցիչների դերը որպես ուսումնառության կազմակերպիչներ, այլ ոչ թե փորձագետներ, որոնք գիտելիք և հմտություն են փոխանցում, ինչպես ավանդաբար լինում էր: ԵՄ Հաղորդագրության մեջ (Եվրոպական Հանձնաժողով 2006ա) շեշտադրվում է այն, որ անձնակազմի մասնագիտական զարգացումը չափազանց կարևոր նշանակություն ունի մեծահասակների ուսումնառության որակի հարցում:

Մեծահասակ դասավանդողները կարիք ունեն թե՛ թեմաների բովանդակության և թե՛ մանկավարժական կարողությունների: Թեմաների բովանդակայինը նրանք որպես կանոն տիրապետում են, իսկ մանկավարժական կարողությունների վերաբերյալ սահմանված պաշտոնական պահանջները շատ քիչ են: «Երկրորդ հնարավորություն ընձեռող» ընդհանուր և մասնագիտական ՄՅԿՈՒ-ն հանրակրթական դպրոցներում և այլ հանրային հաստատություններում, որտեղ աշխատակիցներից հաճախ պահանջվում է ունենալ նույն որակավորումներն, ինչ դպրոցի ուսուցչական կազմը, կան բազմաթիվ կրթական և գործնական ուղիներ, որոնք հնարավորություն են տալիս դառնալ ՄՅԿՈՒ ոլորտի դասավանդող: Երկրների մեծ մասը շատ քիչ ուշադրություն են դարձրել ՄՅԿՈՒ աշխատանքային կազմի, և նույնիսկ ավելի քիչ ուշադրություն՝ ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ում ընդգրկված աշխատակիցների, նախնական ուսուցման

բովանդակությունն ու գործընթացները սահմանելուն: Աշխատակիցները ՄՅԿՈՒ ոլորտ կարող են մուտք գործել իրենց մասնագիտական կյանքի առավել ուշ շրջանում, կարող են գալ և գնալ, կնքել կարճաժամկետ պայմանագրեր և ՄՅԿՈՒ ոլորտում աշխատել որպես իրենց երկրորդ աշխատանք: Հետևաբար, նախնական ուսուցման վրա ուշադրություն դարձնելը գերակայություն չէ շատ երկրներում: Դրա փոխարեն, կարճաժամկետ դասընթացները, աշխատանքային փորձաշրջանն ու աշխատանքի ընթացքում սովորելու համաձայնագրերն են համարվում առավել տեղին: Այս իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում ստեղծել ուսուցիչների կրթության ճկուն համակարգ, որը հնարավորություն կտա մարդկանց ներս ու դուրս անել և ընտրություն կատարել կապված բովանդակության, ուսուցման իրականացման եղանակների և գրաֆիկների հետ (Research voor Beleid and PLATO 2008):

Եվրոպական և ազգային մակարդակներում ոչ մի հստակ տեսակետ չկա, թե ինչ ստանդարտ կարողություններ կան հմտություններ են անհրաժեշտ ՄՅԿՈՒ-ում իրենց առաջադրանքները կատարելու համար, ինչը, մասամբ, պայմանավորված է ոլորտի բազմազանությամբ: Ընդհանուր առմամբ, ուսուցչի կամ վերապատրաստողի մասնագիտությունը կանոնակարգվող մասնագիտություն չէ, և որակավորումների չափորոշիչներն ու կարողությունները դեռ նոր են ի հայտ գալիս: Դրանք երկրից երկիր խիստ տարբեր են և հաճախ առնչվում է միայն մասնագիտական կրթությանը:

Ֆրանսիան մշակել է մասնագիտական ՄՅԿՈՒ-ին առնչվող կարողությունների նկարագիր: **Ռումինիայում**, Կրթության և ուսուցման ոլորտային հանձնաժողովը 2006թ. վավերացրել և թարմացրել է «վերապատրաստողի» մասնագիտական չափորոշիչը և այժմ ցանկանում է տարածել այն վերապատրաստողի բոլոր դասերի վրա, ընդհանուր շրջանակի ներքո, ինչպես նաև մշակել ՄՅԿՈՒ ոլորտում բարձրագույն կրթության ծրագրեր: **Լիտվայում**, ցկյանս ուսումնառության ռազմավարության նախագիծն (2008) ուղղված է մեծահասակ դասավանդողի մասնագիտության իրավական կարգավորմանը և տարբեր տեսակի կրթական հաստատություններում համապատասխան կարողությունների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: **Միացյալ Թագավորությունում**, ԿՈՆՖԻՆՏԵՍ V-ին հաջորդած 11 տարիների ընթացքում, հետմիջնակարգ կրթության բոլոր փուլերում, ուսուցիչների համար սահմանվել են որակավորումների առավել ֆորմալ

պահանջներ: Կարողությունների նկարագրեր կան նաև Դանիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Պորտուգալիայում և Շվեդիայում (Bechtel 2007; Nuissl 2008): **Ֆինլանդիայում**, մեծահասակների լիբերալ կրթության մասին Ակտում ամրագրված են կոնկրետ պահանջներ կապված ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի ուսուցիչների մի շարք հմտությունների հետ: **Իսրայելում**, հատուկ որպես մեծահասակներին կրթողներ վերապատրաստված կազմակերպիչները պետք է Կրթության նախարարությունից ստանան հատուկ վկայական՝ գործելու համար: **Էստոնիան**, որն ունի մեծահասակների մանկավարժների կարողությունների վրա հիմնված մասնագիտական որակավորումների նոր չափորոշիչներ և Սերբիան, տարածաշրջանի այն փոքրաթիվ երկրներից են, որտեղ մեծահասակների մանկավարժ լինելը համարվում է առանձին մասնագիտություն: Մյուս կողմից, Գերմանիան իր զեկույցում նշում է, որ քանի որ երկրում բացակայում են մասնագիտություններին բնորոշ կենտրոնական/հիմնական գծերը, ինչպես օրինակ, զբաղմունքի հստակ նկարագիր, մուտքի կանոններ և անհրաժեշտ որակավորումներ, ապա սոցիոլոգիական մակարդակում «նկարագրման» և «մասնագիտության» գաղափարից մի փոքր տեղաշարժ կա դեպի «արհեստավարժության» գաղափարը որակի զարգացման համատեքստում՝ մի քայլ, որը բնութագրվում է որպես ՄՅԿՈՒ-ում «արհեստավարժության» զարգացում: **Չարավ-արևելյան Եվրոպայի և ԱՊՀ-ի** երկրներում և **Վրաստանում**, ՄՅԿՈՒ ուսուցիչների վերապատրաստմանը անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել, սակայն աշխատաշուկայի կողմից աճող ճնշումների պայմաններում առաջնությունը տրվել է դասապլանների բովանդակությանը, այլ ոչ թե դասավանդման մեթոդաբանության բարեփոխումներին:

2002թ. ԵԿՀ-ն հիմնեց ՄԿՈՒ ուսուցիչների և վերապատրաստողների համացանց (ՄԿՈՒ ՌԻՎ համացանց), որի նպատակն էր աջակցել Չարավ-արևելյան Եվրոպայում նորարարությունների և «պրակտիկ իրականացնող համայնքի» կողմից լավ գործելակերպերի մասին տեղեկատվության փոխանակմանը: Մոնտենեգրոյում, որտեղ վերապատրաստված աշխատակիցների պակաս կա և չի գործում աշխատակիցների ուսուցման կազմակերպված համակարգ, մեծահասակների ուսուցումը առաջիկա ժամանակահատվածի գերակա նպատակներից մեկն է: Ջարմանալի չէ, որ մեծահասակների կրթության գերակշռումն ու կարգավիճակը, որպես բարձրագույն կրթության թեմա, լիարժեք չէ ողջ տարածաշրջանում:

Նորվեգիան, օրինակ, հայտարարում է, որ «մեծահասակների կրթությունն ունի ցածր պրոֆիլ որպես գիտական բնագավառ», իսկ Իսրայելում մեծահասակների կրթության թեման չի հասցեագրվում երկրի ոչ մի համալսարանում: Այդուհանդերձ, ավարտական կուրսերի դասընթացներ կան առնվազն 20 երկրներում, որոնց թվում են **Ավստրիան, Հայաստանը, Կանադան, Չեխիայի Հանրապետությունը, Ռանիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Լատվիան, Լիտվան, Նորվեգիան, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբիան, Սլովակիան, Սլովենիան և Շվեյցարիան**: Այնուամենայնիվ, ըստ Հայաստանի զեկուլցի՝ ոչ ոք չահագրգռված չէ այդ դասընթացով՝ տվյալ երկրում ՄՀԿՈՒ-ի ցածր կարգավիճակի պատճառով: Ի հակադրություն, Ֆինլանդիայի յոթ համալսարաններ ունեն մեծահասակների կրթության պրոֆեսորների կազմ, ինչպես նաև մշակվում են սոցիալական մանկավարժության նոր դասապլաններ, որոնք վերաբերում են ոչ ֆորմալ և ինֆորմալ ՄՀԿՈՒ-ին: Սերբիան ունի ՄՀԿՈՒ ոլորտում ուսուցիչների վերապատրաստման չորսամյա ավարտական կուրսերի մեծահասակների դասընթացների, ինչպես նաև մագիստրոսի և դոկտորի կոչում շնորհող ծրագրերի երկարամյա և առանձնահատուկ պատմություն: Այս համատեքստում ավելի շատ դասընթացներ կան հետբուհական մակարդակում. ութ համալսարաններ յոթ երկրներում իրականացնում են Մեծահասակների կրթության եվրոպական մագիստրատուրա: Երկրների մեծամասնությունը, ՄՀԿՈՒ ոլորտի աշխատակիցների կարգավիճակը, աշխատանքի պայմանները և աշխատավարձը սովորաբար զիջում են կրթության և ուսուցման այլ ոլորտների աշխատակիցների կարգավիճակին, աշխատանքի պայմաններին և աշխատավարձերին: Բացի Ֆինլանդիայից և մի քանի այլ երկրներից, մյուս երկրներում չկա բավարար տեղեկատվություն ՄՀԿՈՒ ոլորտում զբաղվածների թվի վերաբերյալ, ինչպես նաև երկրների մեծամասնությունը չունի լիարժեք տվյալներ աշխատակիցների որակավորումների վերաբերյալ: Լրիվ դրույքով աշխատողներին թվով գերազանցում են կես դրույքով աշխատողները, որոնց կարիերայի հեռանկարները ավելի քիչ են և որոնք հաճախ վճարվում են ժամավճարով կամ աշխատում են որպես կամավորներ: Ֆորմալ ՄՀԿՈՒ ոլորտում մեծահասակների ուսուցիչները նաև կարող են լինել երիտասարդների ուսուցիչներ կամ ունենալ այլ զբաղմունքներ, մասնավորապես երբ նրանք աշխատում են մեծահասակների կրթության երեկոյան կամ հանգստյան օրերին իրականացվող

դասընթացներում: Պորտուգալիայում, աշխատակիցների հավաքագրման պահանջները, որակավորումները, աշխատանքի հավաքագրման ընթացակարգերը և RVCC կենտրոնների աշխատավարձերը հստակ սահմանված են, ի լրումն աշխատակիցների համար մի շարք CPD պայմանավորվածությունների: Թուրքիայում, ՄՅԿՈՒ ծրագրեր իրականացնող պետական ինստիտուտները աշխատակիցների հավաքագրումն իրականացնում են ըստ պետական/հանրային կազմակերպությունների մասնագիտական պաշտոնների համար կազմակերպվող քննությունների ընտրության արդյունքների, իսկ աշխատավարձերը սահմանվում են կառավարության կողմից:

ՄՅԿՈՒ ոլորտի աշխատակազմի շարունակական մասնագիտական զարգացումն (ՇՄՁ) ավելի գերակշռող է, քան նախնական մասնագիտական հատուկ զարգացումը, սակայն, այնուամենայնիվ, այն շարունակում է բազմաթիվ երկրներում մնալ *ոչ լիարժեք* և *ad hoc*, երբ մի շարք կառույցներ մատուցում են այդ ծառայությունը: Հատուկ ՇՄՁ-ի՝ մեծահասակների ուսուցանման հմտությունները զարգացնելու և բարելավելու չափը հիմնականում կախված է գործատուից: Գրեթե բոլոր երկրներում մեծահասակների կրթություն իրականացնող բոլոր խոշոր կազմակերպությունները դասընթացներ ունեն դասավանդման մեթոդների և համապատասխան թեմաների վերաբերյալ նյութեր են տրամադրում իրենց դասավանդող աշխատակիցներին: Այս դասընթացները հաճախ իրականացվում են բարձրագույն կրթության հաստատությունների կողմից: Ընդհանուր առմամբ, շատ քիչ տեղեկատվություն է տրամադրված ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ ոլորտի անձնակազմի ՇՄՁ-ի կամ, IPD-ի վերաբերյալ: Ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ ոլորտի դասավանդողները, ավելի քան ֆորմալ ՄՅԿՈՒ ոլորտի դասավանդողներն, ունեն տարբեր կրթություն, իսկ դասավանդման կամ ուսուցման որակավորումների նկատմամբ սահմանված պահանջները քիչ են: Այնուամենայնիվ, կրթություն իրականացնող ոչ կառավարական խոշոր կազմակերպությունները, որոնք ունեն կրթության և ուսուցման իրականացման հատուկ շրջանակ, որտեղ շատ մանկավարժներ բարձրագույն կրթական հաստատությունների շրջանավարտներ են, և որոնք պետական ֆինանսավորում են ստանում, պարբերաբար ՇՄՁ են իրականացնում իրենց աշխատակիցների համար՝ մեծահասակներին դասավանդելու և այլ թեմաներով: Փոքր ՀԿ-ներում, աշխատակիցներն ավելի շատ աշխատում են կես դրույքով և ունենում են այլ

զբաղմունք, կրթության ոլորտից դուրս: Ուսուցիչների որակավորումների հարցը, այնուամենայնիվ, ավելի շատ հնարավոր է, որ բարձրացվի որակի ապահովման համատեքստում, եթե կազմակերպությունը պետական ֆինանսավորում է ստանում:

Սլովենիայում, աշխատանքին զուգահեռ իրականացվող ուսուցման (INSET) իրավունքն ու պարտականությունը սահմանված է օրենքով: Մեծահասակների կրթության Սլովենական Ինստիտուտը ՄՅԿՈՒ ոլորտի աշխատակազմի համար հիմնական INSET իրականացնողն է: **Պորտուգալիայում**, ամենամյա հիմունքով, ազգային և մարզային մակարդակում մշակվում են ուսուցման հատուկ ծրագրեր Նոր Հնարավորությունների Կենտրոնների մանկավարժական խմբերի համար:

2008թ. մի խումբ պետական համալսարաններ մշակեցին այս ուսուցման կուրսը: Ֆրանսիայում, Շարունակական մասնագիտական զարգացման գիտական կենտրոնները շարունակական մասնագիտական կրթություն են իրականացնում ՄՅԿՈՒ ոլորտի աշխատակազմի համար, ինչպես նաև նպաստում են վերապատրաստման ռեսուրսների մշակմանը: 2007թ. Ավստրիայում հիմնվեց մի հաստատություն, որն իր զգալի ներդրումն ունեցավ ՄՅԿՈՒ ոլորտի աշխատակիցների մասնագիտական զարգացման և որակի ապահովման գործում: Շվեդիայում, ՇՄՁ նախաձեռնությունը՝ ուղղված ներգաղթողներին շվեդերենի ուսուցանման խրախուսմանը, ներդրվեց 2008թ.: Գերմանիայում աստիճանաբար ավելի է կարևորվում վարչական աշխատակիցների ՇՄՁ-ն, կապված նրանց դերի հետ: Խորվաթիայում, Խորվաթական Մեծահասկ ուսումնառու Հասարակությունը (CAS)-ն, որը 1998թ. հիմնված մասնագիտական ասոցիացիա է, աջակցում է ՄՅԿՈՒ աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացմանը: CAS-ն ուղղված է մեծահասակների ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության տեսության և գործնական ասպեկտների բարելավմանը, իր անդամների համար ուսուցման հնարավորությունների ապահովմանը, ՄՅԿՈՒ ոլորտում հետազոտական աշխատանքի խրախուսմանն ու ՄՅԿՈՒ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության խթանմանը:

Մի շարք ԵՄ-27 երկրներում գործում են գիտական և մասնագիտական ՄՅԿՈՒ որակավորումներ ստանալու՝ աշխատավայրում իրականացվող, աշխատանքից չկտրված ուղիներ: ԵՄ-27+-ի շրջանակներում, Ցկյանս Ուսումնառության Ծրագրի շարժունակության գործողությունները/ՇՄՁ բաղադրիչները ուղղված են ՄՅԿՈՒ

ուսուցիչների որակավորումների կատարելագործմանը՝ աջակցելով անձնակազմի մասնակցությանը եվրոպական ուսումնական այցերին, ուսուցման դասընթացներին և աշխատանքային փորձին: Ի լրումն, Վերապատրաստողների վերապատրաստում համացանցը մի ազգային համացանց է, որը ստեղծվել է Cedefop-ի կողմից 1998թ., որպես ՄԿՈՒ աշխատակիցների ուսուցման և մասնագիտական զարգացման ոլորտում հիմնական դերակատարում ունեցողների և որոշումներ կայացնողների ֆորում:

Սերբիայում, մեծահասակ մանկավարժների և կազմակերպիչների (ֆասիլիտատոր) մասնագիտական զարգացումն իրականացվում է ոչ ֆորմալ կրթության հատվածում, արդյունքում ստեղծվում է լավ վերապատրաստված մեծահասակների մանկավարժների համացանց: Նմանապես, **Հայաստանում** թեև առանց կառավարության ներգրավման, տեղական և միջազգային ՀԿ-ների գործունեության արդյունքում կան բազմաթիվ մեծահասակների մանկավարժներ: Մեծահասակների մանկավարժության և ցկյանս ուսումնառության ասոցիացիան համագործակցել է տեղական և արտերկրյա փորձագետների հետ ՇՄԱ ծրագրերի զարգացման գործում:

Իսրայելում շարունակական, արտադրությունից չկտրված ուսուցման համակարգը գործում է մեծահասակների մանկավարժների շարունակական մասնագիտական զարգացմանն աջակցելու համար: ԱՄՆ-ում, պետական իշխանություններից պահանջվում է իրեկանացնել գործող գործելակերպերի մոնիթորինգ, դաշնային ֆինանսավորման համատեքստում, և դաշնային կառավարությունը վերահսկում է STAR ծրագրի օգտագործողի ձեռնարկի տարածմանն ազգային մակարդակում: Ձեռնարկում հետազոտության բացահայտումներն օգտագործվում են որպես կիրառելի դասարանային ռազմավարություններ:

ՄՀԿՈւ համընդհանուր որակի համատեքստում, ԵՄ-27+ երկրների համար նշանակալի է, որ որպես Մեծահասակների ուսումնառության գործողությունների պլանի (Եվրոպական Հանձնաժողով 2007ա) իրականացման մաս, Եվրոպական Հանձնաժողովը մշակում է չափորոշիչներ՝ մեծահասակ ուսումնառու մասնագետների համար, այդ թվում՝ ուղղորդող ծառայություններ, 2009թ: 2010թ. կիրականացվի մանկավարժություն իրականացնող կազմակերպությունների որակի չափորոշիչների մշակման և հավատարմագրման վերաբերյալ հետազոտություն:

Մեծահասակների կրթության և ուսումնառության ոլորտի հետազոտություններ

Գրեթե բոլոր ազգային զեկույցներում նշված է, որ վերջին հինգ տարիների ընթացքում իրականացվել է ՄՀԿՈՒ ոլորտի հետազոտություններ:

Հետազոտության լայն թեմաներն են՝

- ՄՀԿՈՒ-ի և ցկյանս ուսումնառության դերը
- Քաղաքականության մշակում և շահագրգիռ կողմերի դերը
- Ֆինանսավորում
- Կառավարում
- Մասնակցություն, ուղղորդում և թիրախ խմբեր
- Ուսումնառության իրականացում (հիմնարար հմտություններ, ՄՀԿՈՒ-ն՝ հանուն քաղաքացիական մասնագրության, աշխատանքին վերաբերող ՄՀԿՈՒ)
- Որակավորումներ և ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացում
- Որակը, ներառյալ՝ մոնիթորինգ և գնահատում, աշխատակիցների զարգացում
- Գնահատման ուսումնասիրություններ
- Ընդհանուր ուսումնասիրություններ՝ պատմական և նկարագրական

Մանրամասները՝ ըստ թեմաների և երկրների, բերված են Հավելված 4-ում:

Բազմաթիվ ԵՄ-27+երկրներ հղում են կատարում ԵՄ 2007-2013թթ. Ցկյանս Ուսումնառության Ծրագրի Գրունդվիզի և Լեոնարդո Դա Վինչի գործողություններին և դրան նախորդող ծրագրերին մասնակցելու միջոցով իրականացրած հետազոտություններին: Բազմաթիվ երկրներ նաև նշում են, որ մասնակցել կամ օգտվել են OECD-ի հետազոտությունից, այդ թվում՝ Մեծահասակների տառաճանաչության միջազգային հետազոտությանը (OECD 1995; 1997ա; 2000; OECD և Վիճակագրություն Կանադա 2000), Մեծահասակների տառաճանաչության և հմտությունների հետազոտություն (OECD և Վիճակագրություն Կանադա 2005) և գալիք՝ Մեծահասակների կարողությունների միջազգային գնահատման ծրագրին (OECD 2008):

Մեծահասակների կարողություններ

Թեև երկրների մեծամասնությունը նշում է, որ թե՛ ազգային իշխանությունների կողմից տրամադրված և թե՛ միջազգային կազմակերպություններից ստացված հետազոտությունների արդյունքները նպաստում են ապացույցների վրա հիմնված քաղաքականության մշակմանը, այնուամենայնիվ, ընդհանուր միտումն այն է, որ գիտական հաստատությունների և անհատ հետազոտողների կողմից կազմված զեկույցները նույն ազդեցությունը չունեն: Ավելին, թեև առանձին երկրներում հասցեագրված առանձին թեմաներ արտացոլում են ՄՅԿՈՒ զարգացման վիճակի և համապատասխան միջավայրի վերաբերյալ մտահոգությունները, այնուամենայնիվ, իրականացված հետազոտության արդյունքում պարզվում է, որ բոլոր ոլորտներին էլ պատշաճ ուշադրություն չի դարձվում, մասնավորապես ֆինանսավորում, ուսումնառության արդյունքներ, որակավորումներ, ուսուցման որակ և տնտեսական ու սոցիալական ազդեցություն: Ավելին, հետազոտությունների ընդհանուր ծավալը ևս խիստ սահմանափակ է: Օրինակ, Մոնտենեգրոյում չի իրականացվում ՄՅԿՈՒ ոլորտի որևէ վերլուծական հետազոտություն՝ այդ թեմայով զբաղվող ինստիտուտների և համապատասխան ֆինանսավորման բացակայության պատճառով: Ի վերջո, երկրներում, ակնհայտորեն, բացակայում է համակարգային մոտեցումը: Այս համատեքստում արժանի է հիշատակել, որ Ավստրիայում հիմնվել է Մեծահասակների մանկավարժության և CET–ի Ավստրիայի հետազոտության և զարգացման համացանցը՝ Մասնագիտական ուսուցման հետազոտության Ավստրիական ինստիտուտի, Դանուբի համալսարանի Krems/Platform CET հետազոտության և մեծահասակների ուսումնառության Ավստրիական ինստիտուտի համատեղ ջանքերով: Այս համացանցը նպատակ ունի ծառայել որպես բոլոր շահագրգիռ կողմերին իրար կապող գործիք, փոխկապակցված ռազմավարության ստեղծման և հետազոտությունները զարգացնելու նպատակով: Միացյալ Թագավորությունում հետազոտությունների ոլորտը տարածվել է՝ նաև ներառելով մեծահասակների ուսումնառությունը, հատկապես անկախ հետազոտող խորհուրդների և մասնագիտացված հետազոտական կենտրոնների միջոցով, որոնք ֆինանսավորվում են կառավարության կողմից: Այստեղ նաև բարելավվել է բոլոր ոլորտներում և բոլոր փուլերում տվյալների պարբերական հավաքման որակն ու

քանակը: Կանադայում, COMPAS-ը հատուկ հետազոտությունների տեղեկատու է, որը ստեղծվել և պարբերաբար թարմացվում է Մեծահասակների Կրթության և Կանանց Կարգավիճակի Հետազոտական Կենտրոնի կողմից, որին աջակցել է Կանադայի 14 հետազոտողներից ու մասնավոր պրակտիկայով զբաղվողներից բաղկացած խորհրդատվական կոմիտեն: Այս տեղեկատուն մանկավարժության, ուսուցման և տառաճանաչության ոլորտներում իրականացված հետազոտությունների և զեկույցների ցանկ է ֆրանսախոս Կանադայում և հրապարակված է Ինտերնետում: COMPAS-ի նպատակն է խթանել հետազոտություններն ու գիտելիքի փոխանակումը հետազոտողների և մասնավոր պրակտիկայով զբաղվողների շրջանում: COMPAS-ի ինտերնետային կայքից հնարավոր է իմանալ ընթացիկ հետազոտությունների, միջոցառումների մասին, ձեռք բերել թարմ տեղեկատվություն, փաստաթղթերի և մասնագիտացված ամսագրերի, կազմակերպությունների, ինստիտուտների և հետազոտական կենտրոնների հղումներ տեղական և ազգային մակարդակում: Այստեղից հնարավոր է նաև մուտք գործել ֆորում՝ տվյալ ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության վիրտուալ փոխանակման նպատակով: 2006թ. Մեծահասակների Ուսումնառության վերաբերյալ Հաղորդագրությունը (Եվրոպական Հանձնաժողով 2006ա) նշում է այն հանգամանքը, որ մեծահասակների ուսումնառության օգտակարությունը ցույց տալ չկարողանալը տվյալ ոլորտի հիմնական թույլ կողմն է, իսկ *Կրթություն և Ուսուցում 2010թ.* վերջին ընթացիկ զեկույցում (Եվրոպական Հանձնաժողով 2007բ) թերագնահատված են ԵՄ-27 երկրներում մանկավարժության ոլորտում, այդ թվում՝ ՄՀԿՈՒ ավելի շատ հետազոտություններ անցկացնելու անհրաժեշտությունը:

Տարիների ընթացքում, Եվրոպական Հանձնաժողովն աջակցել է մի շարք ՄՀԿՈՒ թեմաների, մասնագիտական մանկավարժության և ուսուցման գրեթե բոլոր թեմաների վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը, CEDEFOP-ի միջոցով: CEDEFOP-ի արդյունքներն են՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը, որակավորումների համակարգերն ու որակյալ ՄԿՈՒ-ն:

Հանձնաժողովի ֆինանսավորմամբ ընդհանուր ՄՀԿՈՒ-ի վերաբերյալ իրականացվող հետազոտություններն են՝

Մեծահասակների Կրթության Միտումներն ու Հարցերը Եվրոպայում (EAEA 2006), Մեծահասակների Կրթություն Իրականացնող Կազմակերպությունների Ուսումնասիրում

(NIACE 2006); Մեծահասակների ոչ ֆորմալ մանկավարժություն (Eurydice 2007); Մեծահասակների Ուսումնառության Մասնագիտությունները Եվրոպայում, ներկա իրավիճակի, միտումների և հարցերի ուսումնասիրություն (*ALPINE*) (Research voorBeleid and PLATO 2008).

1991թ. ի վեր ՄՅԿՈՒ ոլորտում մասնագիտացած Եվրոպական հետազոտողները օգտվել են Մեծահասակների Կրթության Վերաբերյալ Հետազոտության Եվրոպական Հասարակությունից, որպես տեղեկատվության փոխանակման, հետազոտական մեթոդների և արդյունքների փոխանակման պլատֆորմ: Ի լրումն, Մեծահասակների Կրթության Հետազոտությունների և Ջարգացման Եվրոպական Ինստիտուտը (ERDI) միավորում է ողջ Եվրոպայի հետազոտական ինստիտուտներին, որոնց հետազոտությունների թեման ՄՅԿՈՒ-ն է: ՄՅԿՈՒ ոլորտի հետազոտությունների հետ կապված մարտահրավերները լայնորեն արձանագրվել են (ERDI 2004; EAEA 2006).

Այդ մարտահրավերներն են՝

- Տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային հետազոտություններում ՄՅԿՈՒ-ի համեմատական անտեսանելիությունը
- Բազմաթիվ երկրներում ՄՅԿՈՒ համակարգի ենթակառուցվածքների և ֆինանսավորման բացակայությունը
- Ապացույցների վրա հիմնված ՄՅԿՈՒ քաղաքականության մշակման մշակույթի ընդհանուր բացակայությունը շատ երկրներում: **Ֆինլանդիայում** իրականացվող Noste ծրագրին լրացնող հետազոտական ծրագիրը այս առումով ճիշտ գործելակերպի օրինակ է:
- Հետազոտությունների ազդեցության ընդհանուր ցածր մակարդակը որոշումների կայացման վրա և, հետևաբար, ազգային և տարածաշրջանային գիտելիքի բազաներ ստեղծելու անհրաժեշտությունը՝ հետազոտությունների արդյունքներն ավելի լավ օգտագործելու համար:
- Հետազոտությունների համեմատելիությունն ու կիրառելիությունը ազգային/տարածաշրջանային սահմաններից դուրս:

Եզրակացություն

Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի և Իսրայելի ՅՈՒՆԵՍԿՈ-ի տարածաշրջանում ցկյանս ուսումնառությունը, այդ թվում՝ ՄՀԿՈՒ-ն, համարվում է տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ մարտահրավերների հիմնական պատասխան: Ազգային զեկույցների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ տարբեր երկրներում ՄՀԿՈՒ քաղաքականությունների ընդհանուր նպատակներն ու համընդհանուր ուղղությունները նման են, սակայն նկատվում են անմիջական գերակայությունների և մոտեցումների, նպատակներին հասնելու մեթոդների ու գործիքների զգալի տարբերություններ: Քանի որ ՄՀԿՈՒ քաղաքականություններն ու գործելակերպերը բացառապես ազգային են, հետևաբար մի շարք գործոններ նպաստում են ցանկացած երկրում ՄՀԿՈՒ վիճակին, այդ թվում՝

- Գերիշխող սոցիալ-քաղաքական մշակույթը կազմող՝ պետության ընդհանուր և, մասնավորապես, մանկավարժության ուսուցմանն առնչվող դերակատարման վերաբերյալ գաղափարներն ու արժեքները
- Կրթության և ուսուցման ոլորտի գործառույթի վերաբերյալ գերակշռող տեսակետները, տվյալ դեպքում՝ ՄՀԿՈՒ-ն, կապված երկրի սոցիալական, մշակութային, քաղաքական և տնտեսական նպատակների և գերակայությունների հետ
- Երեք հիմնական սոցիալական ինստիտուտների՝ պետության, շուկայի և քաղաքացիական հասարակության միջև իշխանության օպտիմալ հավասարակշռության, դերերի և գործունեության վերաբերյալ գերիշխող տեսակետները
- ՄՀԿՈՒ ոլորտի աշխատանքի ղեկավարման համակարգերը, այդ թվում՝ սոցիալական գործընկերների դերը, տնտեսական զարգացման մակարդակը և մանկավարժության ու ուսուցման ոլորտում ներդրումների մակարդակը:

Տարածաշրջանում ՄՀԿՈՒ- ոլորտի կողքին ընթանում է մի շարք զարգացումների սպեկտոր: Սպեկտորի մի ծայրում, համեմատաբար քիչ թվով երկրներ համակարգված մոտեցում են որդեգրում ֆորմալ և ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ի նկատմամբ, համաձայն որի այն հանդիսանում է մանկավարժության և ուսուցման համընդհանուր համակարգի բաղկացուցիչ, ինքնակառավարվող մաս և պարփակված է առավել լայն

սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական բնագավառներում: Այսպիսով, համընդհանուր ցկյանս ուսումնառության շրջանակներում տարրական/նախնական, միջնակարգ և բարձրագույն մանկավարժության ոլորտների համար ստեղծվել են ոլորտի գործունեությունն ապահովող օրենսդրական դաշտ, քաղաքականություններ, կառուցվածքներ, ֆինանսավորում, ճկուն ուսումնառության իրականացում և աջակցություն, որակավորումների ուսումնառուակենտրոն համակարգեր, անձնակազմի նախնական և շարունակական մասնագիտական զարգացում և համընդհանուր մոնիթորինգ և գնահատում: Քաղաքականության մշակման և կրթության իրականացման մշակույթի հիմնաքարեր են հանդիսանում եռակողմ համաձայնությունները, որոնք ապահովում են սոցիալական գործընկերների պաշտոնական և ակտիվ ներգրավում: Այլ տարածաշրջանների համեմատ, ՄՀԿՈՒ-ում մասնակցության աստիճանը բարձր է, իսկ մասնացության չափերի միջև ճեղքվածքը մասնակցության ամենից շատ հավանականություն ունեցող և ամենից քիչ հավանականություն ունեցողների միջև ավելի փոքր է, քան մյուս տարածաշրջաններում:

Սպեկտորի այս ծայրում, մեծահասակների տառաճանաչության մակարդակը համեմատաբար բարձր է, իսկ կրթության ցածր մակարդակ ունեցողները կարող են կանոնադրական իրավունք ունենալ ձեռք բերելու միջնակարգ դպրոցի ավագ դասարանների և հետմիջնակարգ որակավորումներ համապատասխան ինստիտուտների՝ պետականորեն ֆինանսավորվող համացանցում: Նրանք նաև կարող են ունենալ իրենց ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությունը վավերացնելու կանոնադրական իրավունք՝ լրիվ կամ մասնակի որակավորում ստանալու հնարավորություն, հարկերից ազատում և որակավորման ձեռք բերում:

ՄՀԿՈՒ-ն համարվում է «հանրային ապրանք» և հանրային պատասխանատվությունը հանդիսանում է հանրային սպասարկման ոլորտում վերաբաշխելի և հավասարությունն ապահովող միջոցառումների մի մաս, համակարգված, համաձայնեցված և կանոնակարգվող պրակտիկա աշխատավայրերում և կոլեկտիվ ծրագիր՝ քաղաքացիական հասարակության մեջ, որը նպաստում է փոխզիջման կայացմանը, հասարակության միասնությանը և ժողովրդավարական ինստիտուտների պահպանմանը: Ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ի ներհատուկ արժեքն այն է, որ այն բացահայտ կերպով ճանաչվում է պետության կողմից որպես կոլեկտիվ, ինչպես

նաև անհատական ծրագիր, որը կամրջում է տարբեր մշակութային բազա ունեցող մարդկանց և հանգեցնում է ընդլայնված սոցիալական կապիտալի: Ոչ ֆորմալ կրթության իրականացումը ավելի շատ պայմանավորված է առաջարկով և իրականացվում է պետական և ոչ պետական ինստիտուտների զարգացած ենթակառուցվածքների միջոցով: Հանրաճանաչ ասոցիացիաները և կազմակերպությունները պետական ֆինանսավորում են ստանում, միևնույն ժամանակ պահելով իրենց անկախությունը ուսումնական նյութի բովանդակության և կազմակերպման ձևի առումով, որի վերաբերյալ իրենք պետք է հավետու լինեն՝ պետական ֆինանսավորում ստանալու համար: Որակի, մոնիթորինգի և գնահատման հետ կապված մտահոգությունները ձևակերպվում են քաղաքականությունների տեսքով, դառնում են կառույցներ և միջոցառումներ: Արդյունքը ինտեգրացված, համեմատաբար լավ ՄՅԿՈՒ իրականացումն է, որը արդյունավետ է գործում կապված հասարակական նպատակների և խնդիրների հետ՝ սոցիալական, մշակութային և տնտեսական, և գրավում է մեծահասակներին: Նշանակալի է, որ եթե կիրառելի է, այս երկրները միտում ունեն բարձր միավորներ ստանալ ԵՄ-ի Կրթություն և Ուսուցում 2010թ. հենամիշային չափանիշների հետ համեմատելիս: Այնուամենայնիվ, բոլորը ձգտում են ընդլայնել ՄՅԿՈՒ որակն ու քանակը բոլոր ուղղություններով:

Համապատկերի մյուս ծայրում այն երկրներն են, որտեղ գաղափարախոսության, զարգացման մակարդակի և ռեսուրսների պատճառով, ՄՅԿՈՒ իրականացումը սահմանափակ է և, ինչպես լայնորեն ընդունված է, առաջնորդվում է շուկայով: Օրենսդրական դաշտը, քաղաքականություններն ու ֆինանսական աջակցությունը միմյանց հետ կապ չունեն, իսկ կառույցները մասնատված են: ՄՅԿՈՒ-ի նման քաղաքականությունները հաճախ հնարավոր չի տարանջատել աշխատաշուկայի քաղաքականությունից: Սոցիալական գործընկերների համակարգված ներգրավումը բացակայում է կամ նոր է ի հայտ գալիս: Կրթությունն իրականացվում է դպրոցներում, դասապլանները թարմացման կարիք ունեն, անձնակազմը կարիք ունի ՇՄՁ-ի, իսկ կապերն աշխատաշուկայի հետ թույլ են: ՄՅԿՈՒ մասնակցության գրանցված ցուցանիշները ցածր են: Մասնակցության հավանականություն ունեցող և չունեցող մեծահասակների միջև մասնակցության ցուցանիշների անհամապատասխանությունը շատ մեծ է: Ներդրումների մակարդակը շատ ցածր է, ինչը պայմանավորված է շուկայում կրած անհաջողությամբ, մասնավորապես այն մարդկանց համար, ովքեր

ներկայացնում են այնպիսի խմբեր, որոնց շահերը լավ ներկայացված չեն, իսկ պետական մարմինները կամ չեն կարող, կամ չեն ձեռնարկի փոխհատուցման միջոցառումներ: ՄՅԿՈՒ-ն կարող է կախում ունենալ մասնավոր, շահույթ հետապնդող հատվածից և քաղաքացիական հասարակությունից և կախված է անհատական պահանջարկից: Հանրությունը սահմանափակ պատասխանատվություն է ստանձնում ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի դերի նկատմամբ ժողովրդավարական ինստիտուտների և հասարակության միասնության պահպանման և/կամ ստեղծման գործում, իսկ մասնատված քաղաքացիական հասարակության՝ ՄՅԿՈՒ-ում ներգրավելու կարողությունները սահմանափակ են: ՔՅԿ-ները կախված են ֆինանսավորման սահմանափակ աղբյուրներից՝ ազգային և միջազգային մասնավոր կազմակերպություններ, հոգևոր և պահանջարկի կողմը ներկայացնող ֆինանսավորման աղբյուրներ կամ, հաճախ ընդհանրապես պետական ֆինանսավորում չեն ստանում: Պետական ֆինանսավորմամբ իրականացվող կրթությունից օգտվելու հնարավորությունը կարող է սահմանափակվել իրավունքի չափանիշով, որը հիմնականում ուղղված է դպրոցը չավարտած երիտասարդներին: Կրթությունը հնարավոր է իրականացվի դպրոցական մոդելի հիմունքով և այնքան էլ չհամապատասխանի աշխատաշուկայի կարիքներին: Որոշակի աջակցություն կարող է տրամադրվու ազգային փոքրամասնությունների և այլ խմբերի համար կազմակերպվող տառաճանաչության դասընթացներին: Մոնիթորինգն ու գնահատումը պատահական բնույթ է կրում, կամ իրականացման դեպքում այդ տվյալները չեն օգտագործվում քաղաքականություն մշակելիս: Համապատկերի այս ծայրում գտնվող շատ երկրներ նշում են, որ ավելի շատ իրավական և ֆինանսական սահմանափակումներն են խոչընդոտում ՄՅԿՈՒ-ին աջակցելու իրենց կարողություններին, այլ ոչ թե գաղափարական դիրքորոշումները, և նրանց մեծամասնությունը ձգտում է ընդլայնել ՄՅԿՈՒ քանակը:

Համապատկերի երկու ծայրերի միջև, տարածաշրջանի երկրների մեծ մասում ՄՅԿՈՒ-ն գտնվում է զարգացման գործընթացում՝ քաղաքականության հիմնական ուղղություններ, ղեկավարում, օրենսդրություն, ֆինանսավորում, ենթակառուցվածքներ, մասնակցություն, կրթության իրականացում, ուսումնառության ճանաչում և որակի ապահովում: Այս երկրներում քաղաքական և կրթական լայն

թափը ուղղված է կրթության իրականացմանը՝ համկարգման, որակի և հաշվետվողականության ապահովման միջոցով:

Ընդհանուր առմամբ, համապատկերի միջին մասում գտնվող այս երկրները կամ հատուկ օրենսդրական դաշտ են մշակում մեծահասակների կրթության համար, կամ այդ դրույթներն ամրագրում են կրթության կամ այլ ոլորտների մասին օրենքներում: Հորիզոնական և ուղղահայաց մակարդակներում մասնատվածության հարցը լուծելու համար, ազգային և/կամ տարածաշրջանային նախարարությունների մակարդակում ապակենտրոնացումն ու համակարգումը հանդիսանում են կառավարման երկու հիմնական մոտեցումներ, որոնք հիմա ընդունման փուլում են: Սոցիալական գործընկերների ներգրավումը կամ համակարգվում է պետության կողմից, կամ կամավոր բնույթի է: Կան և ի հայտ են գալիս բազմաթիվ շահագրգիռ կողմերի ընդգրկմամբ ձևավորված ազգային և տեղական գործընկերություններ, սակայն բացի ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ իրականացնող կազմակերպությունների ազգային ներկայացուցչական ասոցիացիաներից, համակարգման և փոխկապակցվածության օրակարգը միշտ չէ որ անդրադառնում է ոչ ֆորմալ ՄՀԿՈՒ-ին:

Բոլոր երկրներում վճռորոշ մարտահրավեր է քաղաքականության իրականացումը՝ ՄՀԿՈՒ-ի իրական զարգացման հասնելու համար: Համապատկերի միջին մասում գտնվող երկրներում մեծահասակների մանկավարժների հետ կապված հիմնական մտահոգությունն այն հանգամանքն է, որ չնայած, ՄՀԿՈՒ քաղաքականությունները հիմնավորվում են երկու նպատակներով՝ տնտեսական զարգացում և սոցիալական ընդգրկում, բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ առավել գերակշռում է «ավելի շատ ավելի լավ աշխատանքի» տնտեսական նպատակը՝ ի վնաս առավել լայն մարդասիրական նվիրման, որն է կրթությունը:

Շատ երկրներ փորձում են հավասարակշռող ակտ կազմել, որտեղ կնշվի, թե ով, ինչի և ում համար է վճարում: Տվյալները լիարժեք չեն, սակայն տրամադրված ազգային տեղեկատվությունից ակնհայտ է դառնում, որ տարբեր երկրներում ՄՀԿՈՒ ոլորտում ներդրումներ կատարելու պարտավորության ստանձնումը տարբեր մակարդակի վրա է գտնվում՝ կախված գաղափարախոսությունից, ղեկավարությունից և ռեսուրսներից: Մեծամասնությունը ֆինանսավորում են «երկրորդ հնարավորությունն ընձեռող» կրթության իրականացումը, այդ թվում՝ տառաճանաչության ուսուցում և

գործազուրկներին հմտությունների ուսուցում, որն իրականացվում է տարբեր կենտրոնացված և ապակենտրոնացված միջոցներով:

Որպեսզի անհատները խթան ունենան իրենց իսկ կրթության համար ներդրումներ կատարել, պետական իշխանությունների, սոցիալական գործընկերների կողմից և խառը ֆինանսավորման միջոցով ֆինանսավորվել են պահանջարկով պայմանավորված սխեմաներ, որոնք հիմնականում մասնագիտական ուսուցման համար տրվող գումարները ուղղել են անմիջապես ուսումնառուին, այլ ոչ թե կրթություն իրականացնող կազմակերպությանը: Գրեթե բոլոր երկրներում բացակայում են ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ում ներդրումների վերաբերյալ ճշգրիտ արձանագրությունները: Տարբեր կանոնադրական և ոչ կանոնադրական, մասնավոր, հոգևոր կազմակերպությունների և պահանջարկի կողմ հանդիսացող աղբյուրների կողմից տրամադրվող ֆինանսավորումը ընդունված նոր է ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ում: Ֆինանսական աջակցության մակարդակում զգալի տարբերություններ կան, իսկ ոչ ֆորալ ՄՅԿՈՒ-ում մասնակցությունը, ընդհանուր առմամբ, տեղի է ունենում ինքնաֆինանսավորման սկզբունքով, բացառություն են կազմում սոցիալապես և տնտեսապես խոցելի խավերի անհատները:

Աշխատանքից բացի այլ նպատակներով իրականացվող ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ում պահանջարկի կողմ հանդիսացող սխեմաների համեմատական բացակայությունը ցցուն կետ է տարածաշրջանում մեծահասակների մանկավարժների համար, որոնք այն կարծիքին են, որ քաղաքացիական հասարակության ֆինանսավորումը սոցիալական կապիտալի զարգացման նպատակով նույնքան կարևոր է, եթե ոչ ավելի կարևոր, որքան մարդկային կապիտալի զարգացումը:

Այս երկրներում հիմնական մարտահրավեր շարունակում է հանդիսանալ ՄՅԿՈՒ-ում մասնակցության աճի ապահովումը: Բոլոր երկրներում իրականությունն այն է, որ մեծահասակների ուսումնառության ամենամեծ ծավալը ֆորմալ կրթությունից դուրս է, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության շրջանակներում: Այսպիսով, ՄՅԿՈՒ-ն իրականում ավելի շատ ՄՈՒ (Մեծահասակների Ուսումնառություն) է, քան ինստիտուցիոնալացված ՄԿ (Մեծահասակների Կրթություն): Երկրների մեծամասնությունում թիրախ են հանդիսանում այն խմբերը, որոնք պատշաճ կերպով ներկայացված չեն, իսկ շատ երկրներում պետական մարմինները աջակցում են ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ին, որովհետև այն հնարավորություն ունի հասնելու կոնկրետ

«ռիսկային գոտում գտնվող» անհատների: Մասնակցությանը խոչընդոտող՝ ժամանակի և այլ ճնշումներին դիմակայելու համար, կրթական կազմակերպությունները ուշադրություն են ստանում ինստիտուցիոնալ մակարդակում: Եկունությունը հանդիսանում է առանցային կազմակերպչական սկզբունք այն երկրներում, որտեղ կան անհատին «համապատասխանեցված» դասընթացներ, անկախ ուսումնառության հնարավորություններ և համապատասխան կրթական աջակցության տրամադրում: Բազմաթիվ երկրներում գործի են դրվում ուղղորդող ռեսուրսներ՝ խթանելու կրկին կրթություն ստանալը, դասընթացն ավարտին հասցնելը և կայուն աշխատանքի անցնելը:

Պետական աջակցությամբ իրականացվող միջոցառումները, որոնք հնարավորություն են տալիս մեծահասակներին ձեռք բերել պարտադիր և միջնակարգ դպրոցի ավագ դասարանների կրթություն և ուսուցման որակավորումներ, գործում են համապատկերի միջին հատվածում գտնվող գրեթե բոլոր երկրներում: Մեծահասակները ունեն օրենքով սահմանված իրավունք ձեռք բերել միջնակարգ կրթության որակավորումներ շատ քիչ երկրներում: Տառաճանաչություն սովորելը շատ հաճախ համարվում է ոչ ֆորմալ ՄՅԿՈւ, սակայն այն կարող է իրականացվել ֆորմալ ՄՅԿՈՒ-ի շրջանակներում որպես աջակցություն: Վերջին տարիներին, որոշ երկրներ իրենց ուշադրությունը կենտրոնացրել են տառաճանաչության ապահովման շրջանակների մշակման վրա, այդ թվում՝ օրենսդրություն, ենթակառուցվածքները և գործողությունների պլաններ: Մի շարք երկրներ նշում են, որ իրենց երկրներում մեծահասակների տառաճանաչության մակարդակը տեղիք չի տալիս միջամտության: Գործատուները շարունակական մասնագիտական կրթության հիմնական իրականացնողներն են, իսկ մեծահասակների, հատկապես գործազուրկ մեծահասակների, նախնական մասնագիտական ուսուցումը սովորաբար իրականացվում է պետության կողմից, որպես ակտիվ աշխատաշուկայի քաղաքականությունների բաղադրիչ: ՏՀՏ ոլորտում ուսուցումը, որպես թվային կարողություն և որպես թեմա, իրականացվում է թե ֆորմալ և թե ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ում, սակայն առավել տարածման միտում ունի ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ում: Ներգաղթողների համար լեզվի ուսուցումն ու մշակութային դասերը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների համար տարրական կրթություն կազմակերպվում են բոլոր երկրներում:

Այնուամենայնիվ, շատ երկրներում ՄՅԿՈՒ-ի ողջ համապատկերի երկայնքով ի հայտ է գալիս անձնական զարգացման և աշխատանք գտնելու նպատակով ՄՅԿՈՒ-ի ոչ հստակ տարանջատում, քանի որ առանցքային կարողությունների արձատները ավելի շատ աշխատավայրում են, իսկ առավել մասնագիտական նպատակով ուսումնառությունը ավելի շատ իրականացվում է համայնքային կրթություն իրականացնող կազմակերպությունների կողմից, իսկ մի շարք մասնագիտությունների գծով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումն ավելի տարածում են գտնում:

Ցկյանս ուսումնառության հասարակություն ստեղծելու գերպետական և ազգային նպատակները առաջ են բերում որակավորումների առավել փոխկապակցված և ճկուն համակարգեր ստեղծելու պահանջ: Եվրոպայում զարգացումների վերահսկիչ ուժն ու դրանց նպաստողը Որակավորումների Եվրոպական Շրջանակն է (ՈԱՇ), և կառավարությունները արձագանքում են ՈԱՇ-ին՝ մշակելով ազգային և/կամ տարածաշրջանային շրջանակներ: Քայլեր են ձեռնարկվում ուսումնառության արդյունքների ճանաչման համար, անկախ այն բանից, թե որտեղ, երբ և ինչպես են դրանք ձեռք բերվել: Ընդհանուր առմամբ, վավերացման հարցն առաջ քաշեցին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտները, որպես անհատների, ձեռնարկությունների և հասարակության հմտությունների մակարդակի բարձրացման միջոց:

Այն մտավախությունը կա, որ ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի ոլորտում վավերացումը կարող է, ի վերջո, հանգեցնել ոչ ֆորմալ ուսումնառության ոլորտում հավատարմագրման համակարգերի անմիջական կիրառման և չպարզևատրող ուսումնառության նկատմամբ հետագա հարգանքի կորստի: Բացի այդ, մեկ անգամ ևս, պարզ է դառնում, որ կրթության և կրթության օգուտների առավել հավասարաչափ բաշխման խթանման միջոցառումներ ավելի շատ կիրառում են այն երկրները, որոնք ունեն կրթության լավ մակարդակ: Ի լրումն, բազմաթիվ երկրներում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացմանն ուղղված քայլերը ևս արդարացիորեն ահռելի դժվարությունների են հանգեցնում՝ թե տեխնիկական, մշակութային և թե քաղաքական:

Շատ երկրներում հիմնական թեմա է կրթության և ուսումնառության արդյունավետության ընդլայնումը որակի չափորոշիչների բարելավման միջոցով:

Երբ ՄՅԿՈՒ-ն իրականացվում է հիմնական դպրոցներում կամ բարձրագույն կրթական հաստատություններում, ապա կիրառվում են այդ հաստատություններում գործող որակի ապահովման միջոցառումները: Հանրության՝ որակի վերաբերյալ ունեցած մտահոգությունները սահմանափակ դեր ունեն աշխատավայրերում իրականացվող ՇՄՈՒ-ում: Ձեկույցներում նշվում է, որ համակարգային մակարդակում կան ֆորմալ ՄՅԿՈՒ-ի որակի ապահովման մի շարք մոտեցումներ, իսկ ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի դեպքում այդ մոտեցումներն ավելի քիչ են: Այնուամենայնիվ, շատ երկրներում դեռ չեն մշակվել բավարար կատարողական ցուցանիշներ կամ այդ երկրներում չեն գործում համապատասխան կազմակերպական ձևեր՝ անհրաժեշտ տվյալները հավաքելու համար, ինչի արդյունքում դժվար է չափել ՄՅԿՈՒ գործողությունների ընդհանուր որակն ու ազդեցությունը:

ՄՅԿՈՒ-ի որակի ապահովման համար վճռորոշ է աշխատակիցների մասնագիտական զարգացումը: Ընդհանուր առմամբ շատ քիչ ուշադրություն է դարձվում ֆորմալ ՄՅԿՈՒ ոլորտի աշխատակիցների նախնական ուսուցման բովանդակության և գործընթացների սահմանմանը, և նույնիսկ ավելի քիչ ուշադրություն է դարձվում ոչ ֆորմալ ՄՅԿՈՒ-ի աշխատակազմերի ախնական ուսուցման բովանդակության և գործընթացների սահմանմանը: Շարունակական մասնագիտական զարգացումը(ՇՄՁ) ավելի է գերակշռում, քան նախնական մասնագիտական հատուկ զարգացումը (ՆՄՁ), սակայն այն շարունակում է մնալ ոչ լիարժեք և կամայական: Մեծահասակների կրթության, որպես բարձրագույն կրթության գիտաճյուղ, հիմնական շեշտադրումը հետբուհական մակարդակում է, որը հանդիսանում է գիտական ճյուղ և/կամ շարունակական մասնագիտական զարգացում:

Երկրների մեծամասնությունում հստակ տեսակետներ անհրաժեշտ կարողությունների կամ հմտությունների չափորոշիչների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են ՄՅԿՈՒ ոլորտի մասնագիտական առաջադրանքները կատարելու համար. սա պայմանավորված է դաշտի բազմազանությամբ: Շատ քիչ թվով երկրներ արդեն մշակել են ՄՅԿՈՒ անձնակազմի կարողությունների նկարագրերը: Սակայն մյուս երկրները հեռանում են «նկարագրման» և «մասնագիտության» գաղափարից դեպի «արհեստավարժության» գաղափարը և ՄՅԿՈՒ-ում «արհեստավարժության» զարգացմանը: 2009թ. Եվրոպական Հանձնաժողովը կմշակի մեծահասակների ուսումնառության ոլորտի մասնագետների չափորոշիչները

ՄՅԿՈՒ-ի վերաբերյալ իրականացվող հետազոտությունների ծավալն ու շրջանակը սահմանափակ է տարածաշրջանի բոլոր երկրներում և հույժ անհրաժեշտություն կա ստեղծել հետազոտությունների իրականացման ենթակառուցվածքներ և փոխգործուն համակարգէ ՄՅԿՈՒ ոլորտի հետազոտությունների քանակը, որակն ու ազդեցության շրջանակն ընդլայնելու նպատակով:

Հանձնարարականներ

Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի և Իսրայելի ՅՈՒՆԵՍԿՈ-ի տարածաշրջանում ՄՅԿՈՒ-ն դիմակայում է մի շարք մարտահրավերների՝ քաղաքականության, օրենսդրության, ղեկավարման, ֆինանսավորման, մասնակցության, դասավանդման իրականացման, ճանաչման, որակի և հետազոտության բոլոր առանցքային բնագավառներում: Համապատասխանաբար, տարածաշրջանում ՄՅԿՈՒ-ի որակը բարելավելու և իրականացման ծավակներն ընդլայնելու նպատակով, տարածաշրջանում ՅՈՒՆԵՍԿՈ-ի Անդամ պետություններին և Բուդապեշտում տարածաշրջանային նախապատրաստական հանդիպման մասնակիցներին առաջարկվում են հետևյալ հանձնարարականները՝ կապված ՄՅԿՈՒ ոլորտի հետ.

Պետք է ամրապնդել ՄՅԿՈՒ-ի տեղը ցկյանս ուսումնառության շրջանակում և ցկյանս ուսումնառության ռազմավարություններում: ՄՅԿՈՒ ոլորտը պետք է ստանա առավել հզոր աջակցություն, քանի որ այն տնտեսական զարգացման և սոցիալական համախմբվածության առանցքային տարր է հանդիսանում: Պետք է վերահսկել մեծահասակների կրթությունից և ուսուցումից՝ մեծահասակների ուսումնառության անցնելու միտման հնարավոր ազդեցությունները՝ հավասարակշռելու մեծահասակների համար հնարավոր անշահավետ իրավիճակները:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել ՄՅԿՈՒ ոլորտի փոխկապակցված քաղաքականության մշակմանը և առավել մեծ ուշադրություն՝ քաղաքականության իրականացմանը: Պետք է կատարելագործվի համապատասխան բոլոր քաղաքականությունների ինտերֆեյսը: Թեև ՄՅԿՈՒ-ի խթանման և աջակցության տրամադրման համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրություն, այնուամենայնիվ, պետք է հիշել, որ միայն օրենսդրական դաշտը չի կարող հանգեցնել ՄՅԿՈՒ-ի կայուն իրականացման: Ղեկավարման խնդիրները պետք է

լուծվեն՝ տեղական, տարածաշրջանային և ազգային շրջանակներ, կառուցվածքներ և գործընկերություններ ստեղծելու նպատակով, որոնք անհրաժեշտ են ՄՀԿՈՒ ոլորտի զարգացման, համակարգման, ֆինանսավորման, իրականացման, որակի կառավարման և մոնիթորինգի համար: Առանձնապես պետք է խթանել և աջակցել քաղաքացիական հասարակության ներգրավմանը ղեկավարման գործում: Հիմնական շահագրգիռ կողմերը, մասնավորապես պետական մարմիններն ու գործատուները, պետք է ավելացնեն ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ միջավայրում իրականացվող ՄՀԿՈՒ-ին տրվող ֆինանսավորման ծավալները՝ ելնելով սոցիալական և քաղաքական, ինչպես նաև տնտեսական նպատակներից: Ի լրումն, պետք է գործեն կանոնակարգող և ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք կնպաստեն կառավարության առավել ցածր մակարդակների, ձեռնարկությունների, քաղաքացիական հասարակության և անհատների կողմից կատարվող ներդրումների ծավալների ընդլայնմանը: Հույժ անհրաժեշտ են առաջընթացի մոնիթորինգի հենամիջոցների սահմանումը: Անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ մեծահասակների կրթության և ուսումնառության ծավալներն ընդլայնելու համար, ինչպես նաև պետք է աջակցել և խթանել առավել հավասարաչափ ՄՀԿՈՒ-ի իրականացմանը՝ կոնկրետ միջոցառումների միջոցով, որոնք ուղղված են մասնակցության արգելքների վերացմանն ու մասնակցության խթանմանը, մասնավորապես այն մեծահասակների համար, որոնց մասնակցությունը գրեթե հավանական չէ՝ նախնական կրթության և ուսուցման մակարդակի, աշխատաշուկայի վիճակի, աշխարհագրական վայրի, տարիքի, սեռի և/կամ ազգային պատանելիության պատճառով:

Պետական աջակցությամբ իրականացվող ՄՀԿՈՒ-ն պետք է իրականացվի պետական կամ պետական աջակցությամբ գործող մեծահասակների տեղական, ճկուն միջավայրերի միջոցով, որպես ինստիտուցիոնալ հանրային ծառայությունների մի մաս՝ ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում սոցիալական համախմբվածություն, տնտեսական զարգացում և հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով:

Մեծահասակների կրթության և ուսումնառության բոլոր տարրերը՝ «երկրորդ հնարավորություն ընձեռող» ուսուցում՝ միջնակարգ կամ հետմիջնակարգ որակավորումների ձեռքբերման համար, մասնագիտական կրթություն և ուսուցում,

մեծահասակների լիբերալ կրթություն և մեծահասակների բարձրագույն կրթություն, պետք է մշակվեն և համապատասխան աջակցություն ստանան հիմնական շահագրգիռ կողմերի կողմից:

Պետք է խթանել և աջակցել ուսումնառության ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ համակարգերի և միջավայրերի միջև փոխկապակցվածության և փոխգործակցության ընդլայնմանը: Պետք է խթանել և աջակցել մեծահասակների ուսումնառության և կրթության բոլոր առանցքային կարողությունների: Առաջնությունը պետք է տրվի մեծահասակակենտրոն քաղաքականությունների և գործելակերպերի մշակմանը:

Անհրաժեշտ է մշակել և պահել ցկյանս ուղղորդման համակարգեր, որը արդյունավետ ուսումնառության մի մաս է կազմում՝ աջակցելով ՄՅԿՈՒ-ի մատչելիությանը, արդյունքների փոխանցմանը և առաջընթացին:

Պետք է արագացնել համընդհանուր և փոխկապակցված որակավորումների համակարգի շրջանակներում ուսումնառության ճանաչումը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ, ինչպես և երբ է այն ձեռք բերվել, ներառելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները՝ ուսումնառության արժեքը բարձրացնելու և մասնակցությունն ու առաջընթացը խթանելու նպատակով: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման արդյունքները պետք է մոնիթորինգի ենթարկվեն:

Որակին վերաբերող հարցերին և որակյալ արդյունքների երաշխավորմանն ուղղված քաղաքականությունների, կառույցների և միջոցառումների մշակման գործընթացի արագացումը հույժ կարևոր է, ներառյալ ՄՅԿՈՒ ոլորտի աշխատակազմի կարողությունների նկարագրերի կազմումը և ՄՅԿՈՒ ոլորտի աշխատակազմի նախնական ու շարունակական մասնագիտական զարգացման համակարգված մոտեցումը, որը դյուրացնում է արհեստավարժ ՄՅԿՈՒ իրականացման հասնելու գործընթացը:

Պետք է գործեն տվյալների համաձայնեցված, համապարփակ համակարգեր՝ բազային տվյալներ ունենալու, հենամիջներ սահմանելու, առաջընթացի մոնիթորինգ իրականացնելու և ՄՅԿՈՒ ոլորտի համընդհանուր տեսանելիությունը ապահովելու նպատակով:

ՄՅԿՈՒ ոլորտի հետազոտությունների իրականացմանը, արդյունքների տարածմանն ու կիրառմանը նպաստելու համար անշուշտ անհրաժեշտ է զարգացնել

հետազոտությունների իրականացման համակարգը և հետազոտությունների իրականացման ու արդյունքների տարածման կայացած մեխանիզմներ, և, իհարկե, հետազոտությունների իրականացման համակարգ, որպեսզի հետազոտությունների արդյունքներն օգտագործվեն քաղաքականություններ մշակելիս, դրանք իրականացնելիս և մոնիթորինգի և գնահատման համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.

Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի և Իսրայելի ՅՈՒՆԵՍԿՈ-ի Տարածաշրջանի Անդամ պետություններ

Ադրբեջան	Հայաստան
Ալբանիա	Հունաստան
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ղրղզստան
Անդորրա	Մալթա
Բելոռուսիա	Մոնակո
Բելգիա	Մոլդավիայի Հանրապետություն
Բոսնիա և Հերցոգովինա	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ
Բուլղարիա	Թագավորություն
Գերմանիա	Մոնտենեգրո
Դանիա	Նախկին Հարավսլավիայի
Էստոնիա	Հանրապետություն Մակեդոնիա
Թուրքիա	Նիդեռլանդներ
Իսլանդիա	Նորվեգիա
Իսպանիա	Շվեդիա
Իսրայել	Շվեյցարիա
Իռլանդիա	Չեխիայի Հանրապետություն
Իտալիա	Պորտուգալիա
Լատվիա	Ռումինիա
Լեհաստան	Ռուսաստանի Դաշնություն
Լիտվա	Սան Մարինո
Լյուքսեմբուրգ	Սերբիա
Խորվաթիա	Սլովակիա
Կանադա	Սլովենիա
Կիպրոս	

Վրաստան
Տաջիկստան
Ուկրաինա
Ֆինլանդիա

Ֆրանսիա

Հավելված 2.

Տարածաշրջանային Ձեկույցում ընդգրկված Ազգային Ձեկույցներ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Բելգիա
Բուլղարիա
Գերմանիա
Դանիա
Էստոնիա
Թուրքիա
Իսրայել
Իռլանդիա
Լատվիա
Լեհաստան
Լիտվա
Խորվաթիա
Կանադա
Կիպրոս
Հայաստան
Հունաստան
Ղրղզստան
Մոլդավիայի Հանրապետություն

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային
Իռլանդիայի Միացյալ
Թագավորություն
Մոնտենեգրո
Նախկին Հարավսլավիայի
Հանրապետություն Մակեդոնիա
Նիդեռլանդներ
Նորվեգիա
Շվեդիա
Շվեյցարիա
Չեխիայի Հանրապետություն
Պորտուգալիա
Ռումինիա
Ռուսաստանի Դաշնություն
Սերբիա
Սլովակիա
Սլովենիա
Վրաստան
Տաջիկստան
Ֆինլանդիա
Ֆրանսիա

Հավելված 3.

Ակնկալիքները ԿՈՆՖԻՆՏԵԱ VI-ից (2009)

Ակնկալիքներ՝ ինչի պետք հասնի կամ ինչի կարող է հասնել ԿՈՆՖԻՆՏԵԱ VI-ը	Երկիր/Երկրներ
Համագործակցության/համացանցի խթանում	
Ձարգացնել տրանսազգային և միջազգային մասնագիտական հարաբերություններ, այդպիսով խրախուսելով ազգերի և երկրների ներսում շահագրգիռ կողմերի համագործակցությունը	Բուլղարիա, Կանադա, Չեխիայի Հանրապետություն, Ֆրանսիա, Գերմանիա, Իսրայել, Լատվիա, Լիտվա, Սերբիա, Սլովենիա, Շվեյցարիա
Խթանել տարածաշրջանային համագործակցությունը մեծահասակների կրթության ոլորտում՝ պաշտպանելու տարածաշրջանի բոլոր ազգերի միջև Մեծահասակների Կրթության Միջերկրական Երկխոսության հաստատմանը: Տարածաշրջանային խաղաղության խթանում:	Իսրայել
Անպակաս միջազգային մասնագիտացված կառույցները, ինչպիսիք են՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի ՑՈԻԻ, ICAE և նրանց տարածաշրջանային մարմինները:	Իսրայել
Տեղեկատվություն ստանալ ՄՀԿՈԻ ոլորտի գլոբալ և տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ	Չեխիայի Հանրապետություն, Սերբիա
Ուշադրություն հրավիրել և վերահաստատել առկա նվաճումները, շրջանակներն ու օրակարգերը	
EFA –ում առ այսօր գրանցված նվաճումները	Ֆրանսիա
Ավելի շեշտադրել մեծահասակների ուսումնառությունը EFA-ում և ՀՁՆ-ում	Նորվեգիա
Փորձագիտական և ֆինանսական աջակցություն տրամադրել ազգային մակարդակում EFA-ի և ՀՁՆ-ի խնդիրների իրականացման նպատակով	Սերբիա
Վերահաստատել «Մեծահասակների ուսումնառության Համբուրգի Հռչակագիրը» և «Ապագայի Օրակարգը»	Գերմանիա
Վերանայել «Ապագայի Օրակարգի» շրջանակներում ձեռք բերված նվաճումները	Կանադա
Վերահաստատել Սոֆիայի՝ գործողությունների կոչը	Էստոնիա, Գերմանիա
Լինել ազգային մակարդակում մեծահասակների կրթության ոլորտի քաղաքականության և պրակտիկ գործունեության վրա ազդող գործիք	Սերբիա
Շարունակել ԿՈՆՖԻՆՏԵԱ VI-ի ձեռքբերումները	Միացյալ Թագավորություն
Շարունակել և ընդլայնել գլոբալ գիտելիքի հասարակության կարևորումը, մասնավորապես դեպի գիտության-վրա հիմնված տնտեսություն շարժվելու ճանապարհին	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Հաստատել ՄՀԿՈԻ նշանակությունը	
Կառավարություններին հստակ ազդակներ տալ ՄՀԿՈԻ-ի դերի և կարևորության մասին:	Կանադա, Չեխիայի Հանրապետություն, Ռումինիա

<p>ՄՅԿՈՒ-ի վճռորոշ դերը ոչ միայն տնտեսական բարօրության և աշխատանքի, այլ նաև հասարակության համախմբվածության, ժողովրդավարության, կայուն զարգացման, համայնքային կյանքի և անհատների անձնական ու սոցիալական նպատակների համար (Կանադա)</p>	
<p>Վերանայել ԿՈՆՖԻՆՏԵԱ V-ի մի շարք նպատակների նկատմամբ ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ մեծահասակների կրթության առավել համակարգված ինտեգրում կրթական պլաններում, ֆինանսավորող կառույցներում և կառավարությունների օրակարգերում</p>	Կանադա
<p>Գերակայություններ, թիրախներ, միջոցներ, ռեսուրսներ</p>	
<p>Սահմանել իրականացման ենթակա առաջնային խնդիրները, սահմանել իրատեսական թիրախներ և ժամանակացույցեր, որոշարկել կոնկրետ միջոցառումներ՝ այդ թիրախներին հասնելու համար՝ ներգրավելով որքան հնարավոր է շատ գերակատարողների:</p>	Գերմանիա
<p>Ազգային իշխանությունների ազդեցությունը կապված գերակայությունների, թիրախների, միջոցների և ռեսուրսների հետ</p>	
<p>Ձգտել ընդգրկել մեծահասակների կրթությունը կառավարությունների գերակայությունների ցանկում և համոզել նրանց ստանձնել ՄՅԿՈՒ ոլորտի զարգացման և ֆինանսական աջակցության պարտավորությունը:</p>	Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիա
<p>Միջազգային ուշադրությունը մեծահասակ ուսումնառուի կարիքներին, շարունակական բարձրագույն կրթության կարևորությունը, աշխատուժի զարգացման արժեքը և ոչ ավանդական ուսումնառուների առաջընթացը մեր պետության և ազգային առաջնորդների համար գերակայություն է, իրատեսական ֆինանսավորման խթանում, հաղորդակցության բարելավում և ամերիկյան աշխատուժի զարգացման առավել շեշտադրում, որպես կենսունակ միջակից միջազգային համայնքում (Օսթին Պեյ Պետական Համալսարան, Ընդլայնված և Հեռավար Կրթության Կենտրոն)</p>	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
<p>Հաստատել ՄՅԿՈՒ ստանալու իրավունքը</p>	
<p>Ուշադրություն բոլոր մարդկանց՝ գիտելիք ստանալու իրավունքի նկատմամբ, որը հանդիսանում է կայուն տնտեսական աճի և զարգացման պայման</p>	Շվեդիա
<p>ՄՅԿՈՒ-ի դերի հիմնավորում</p>	
<p>Վերահաստատել ՄՅԿՈՒ-ի կենտրոնական և համակողմանի դերը և նրա օգտակարությունը բոլոր երկրների համար և ուսումնառու հասարակության ստեղծման գործում:</p>	Հայաստան, Կանադա, Էստոնիա, Գերմանիա, Իսրայել, Հունգարիա, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա, Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիա
<p>Հաստատել բազմաբնագավառ և տարբեր ոլորտները խաչաձևող մարտահրավերները, որոնց դեմ են առնում</p>	Գերմանիա

